

ԵՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՎՃՈՒՑ՝ ԹՈՒՐՔԻԱՆ ՊԵՏՔ Է ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԷ ՏԻՆՔԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Սեպտեմբեր 14-ին Եւրոպայի Մարդու Իրաւունքներու Դատարանը հրապարակեց իր վճիռը՝ կապուած «Ակոս» թերթի խմբագրապետ Հրանդ Տինքի սպանութեան ժամանակ թրքական իշխանութիւններու անգործութեան եւ դէպքը կանխելու գծով համապատասխան քայլեր չառնելու համար:

Եւրոպական դատարանը վճռեց, որ թրքական կառավարութիւնը Տինքի ընտանիքին պէտք է վճարէ շուրջ 135 հազար տոլար փոխհատուցում, ինչպէս նաեւ ծածկէ դատական բոլոր ծախսերը, որ կազմած է 37 հազար տոլար:

Օգոստոսին Տինքի ընտանիքը դիմած էր Մարդու Իրաւունքներու եւրոպական դատարան պահանջելով պատժել թուրքիան՝ Տինքի սպանութիւնը չկանխելու պատճառաւ:

Շաբ.ք էջ 4

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ԺԱՄԵՐՈՎ ՊԱՏԱՆԴ ՊԱՅՈՒԱԾ ԵՆ ԻՍԹԱՆՊՈՒԼԻ ՕԴԱԿԱՅԱՆԸ

Սեպտեմբեր 13-ի առաւօտեան Իսթանպուլի օդանաւակայանի թուրք պաշտօնեաներու եւ հայ լրագրողներու միջեւ տեղի ունեցած է միջադէպ:

Հայ լրագրողներու փոխանցած տեղեկութիւններուն համաձայն, «Մամուլի դերը զարբարեան հակամարտութեան մէջ եւ տարածաշրջանային անվտանգութեան եւ համագործակցութեան բարելաւումը» սեմինարին մասնակցող լրագրողները, ինչպէս նաեւ Երեւանի Մամուլի Ակումբի նախագահ Բորիս Նաւասարդեանը, որ սեմինարի կազմակերպիչներէն

է, մի քանի ժամ պատանդ պահուած են թրքական օդանաւակայանէն ներս: Օդանաւակայանի պաշտօնեաները մանրակրկիտ ստուգած են հայ լրագրողներու անձնագրերը, ուզած են վստահ ըլլալ, որ անոնք ունին ետդարձի տոմս եւ գումար՝ թուրքիոյ մէջ կեցութեան համար:

Միջադէպի կապակցութեամբ Բորիս Նաւասարդեան հայկական մամուլին ուղարկած է հետեւեալ տեղեկութիւնները.

«Մենք (11 հոգի) ժամանել Շաբ.ք էջ 4

ԱՏՐՊԵՅՃԱՆ ՍԱԿ-Ի ՕՐԱԿԱՐԳԵՆ ՀԱՆՅ ՀԱԿԱՅԱՅ ԻՐ ԲԱՆԱԶԵԸ

ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի օրակարգէն հանուած է Ատրպէյճանի կողմէ ներկայացուած հակահայ բանաձեւի նախագիծը: Ատրպէյճան խնդրած է բանաձեւի քննարկումը տեղափոխել յաջորդ նստաշրջանի օրակարգ:

Այս առթիւ Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը հանդէս եկաւ յայտարարութեամբ մը, գոհունակութիւն յայտնելով այդ իրադարձութեան կապակցութեամբ: «Շնորհակալ ենք ՄԱԿ-ի անդամ բոլոր այն երկրներին եւ առաջին հերթին ԵԱՀԿ Մինսկի Խումբի համանախագահ պետութիւններին, որոնք իրենց դիրքորոշմամբ կանխեցին Ատրպէյճանի փորձերը՝ շեղել եւ վնաս հասցնել զարբարեան հիմնախնդրի կարգաւորման բանակցային գործընթացին՝ թոյլ չտալով ՄԱԿ-ի ԳԱ-ում Ատրպէյճանի կողմից ներկայացուած ապակառուցողական բանաձեւի ընդունումը:

«Ատրպէյճանը պէտք է գերծմնայ Մինսկի Խումբի շրջանակներում ընթացող կարգաւորման գործընթացը այլ հարթակներ տեղափոխելու շարունակական փորձերից, սադրիչ ու ռազմատենչ

յայտարարութիւններից եւ գործողութիւններից, որպէսզի բանակցային գործընթացը առաւել կառուցողական եւ արդիւնաւէտ ընթացք ունենայ», ըստած է Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան յայտարարութեան մէջ:

ԵԱՀԿ Մինսկի Խումբի համանախագահներ՝ Ռոբերտ Բրադկէ (ԱՄՆ), Պեռնար Ֆասիէ (Ֆրանսա) եւ Իկոր Պոպով (Ռուսաստան), ողջունեցին Ատրպէյճանի որոշումը՝ ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովին իր ներկայացուցած բանաձեւի յետաձգման առթիւ:

Բանաձեւի քննարկումը յետաձգելու որոշումին կապակցութեամբ, ՄԱԿ-ի մօտ Ատրպէյճանի մնալուն ներկայացուցիչը ըստած է, որ պատճառը ԵԱՀԿ-ի Մինսկի Խումբի համանախագահներու յայտարարութիւնն էր:

Մինսկի Խումբի միջնորդները յայտնած էին, որ ԵԱՀԿ-ի գաղաթնաժողովէն առաջ, հակամարտութեան բոլոր կողմերը պէտք է աւելի կառուցողական դիրքորոշում որդեգրեն առաջարկուած ծրագիրը իր ակնադրուած եւ յառաջընթաց ապահովելու համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՄԵԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Բ.Ի ԵՐԿՕՐԵԱՅ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՕԾՈՒՄԸ ՍՐԲՈՑ ԴԵՒՈՆԴԵԱՆՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՏԱԾԱՐԻ

Շաբաթ, 11 Սեպտեմբերի 2010, պատմական օր մը հանդիսացաւ Հարաւային Գալիֆորնիոյ հայ գաղութին համար: Արդարեւ այդ օր կէսօրէ յետոյ ժամը 3ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրապոստոս Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ եւ մասնակցութեամբ բարձրաստիճան հիւր հոգեւորականներու եւ պետական անձնաւորութիւններու՝ տեղի ունեցաւ առաջնորդանիստ Մայր եկեղեցոյ սրբալոյս միւռնոսով օծման արարողութիւնը: Այս առթիւ եկեղեցին ստացաւ Սրբոց Ղեւոնդեանց անունը: Այս եւ յաջորդ օրուան հոգեպարար արարողութեանց ժողովուրդը հետեւեցաւ նաեւ Առաջնորդարանի համացանցի եւ տեղւոյն Գալիֆորնիոյ սրահի լայնապատաս Կեռատեսիլի, ինչպէս նաեւ Թրքմենեան բլազայի մէջ գետեղուած «Բլաթֆորմ»ի միջոցաւ:

Նոյն օրը, առաջնորդարանի բակին մէջ գետեղուած յատուկ



խաչքարի մը օրհնութիւնն ու օծումը կատարեց Վեհափառ Հայրապետը: Արդարեւ սոյն խաչքարը նուիրուած էր 2001 թուին Սեպտեմբեր

11ին Նիւ Եորք գոյգ աշտարակներու փլուզման գոհ գացած աւելի քան 3000 նահատակներու յիշատակին: Լոս Անձելըսի քաղաքապետ

Անթօնիօ Վիյարախօսան եւ այլ դիւանագէտներ ներկայ եղան խաչքարի եւ եկեղեցոյ օծման արարողութեանց:

Երեկոյեան ժամը 5:30ին առաջնորդարանի Գալիֆորնիոյ սրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ընթրիք ի պատիւ Ս. Ղեւոնդ Մայր եկեղեցոյ բարերարներուն, կնքահայրերուն եւ հիւրերուն: Այս միջոցառումին ներկայ եղաւ նաեւ Վեհափառ իր շքախումբի անդամներով եւ հոգեորականներու խումբով:

Նշենք նաեւ որ կարգապահական եւ հիւրերու պատշաճ ընդունման, տեղաւորման, ինքնաշարժներու դասաւորման համար բացառիկ յանձնախումբեր ստեղծուած էին, որոնք իրենց կարելին ըրած էին, ցուցակագրուած ու թուագրուած ձեւով, հարկն ու պատշաճը տնօրինելու, առաջըն առնելու համար ստեղծուելիք խուճապին:

Շաբ.ք էջ 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՓԱՌԱՏՕՆ

ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 26, 2010

VERDUGO PARK - ԿԼԵՆՏԷՅԼ

FREE ADMISSION
UMPSRC ԱՅՍԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՊԵՏՔ Է ՄՏԱԾԵԼ «ՆԱՏԵԼՈՒ» ՄԱՍԻՆ

ՅԱԿՈՐԱՎԱԼԵԱՆ

Ազգային ժողովի նախագահն ասում է, թե համոզուած է, որ 2012 թուականի ընտրութեանը Հանրապետական կուսակցութիւնը կ'ունենայ մեծամասնութիւն: Դէ բնական է, որ նա չէր ասի, որ օրինակ վատահ է, թէ ՀՀԿ-ն 2012 թուականի ընտրութեանը պարտուելու է ընդհանրապէս կամ կորցնելու է ներկայիս մեծամասնութիւնն ու ստիպուած է լինելու կոալիցիա կազմել: Բայց արդեօք բաւարար են այն հիմքերը, որոնք Հովիկ Աբրահամեանի մօտ ձեւաւորել են համոզմունք, որ ՀՀԿ-ն էլ լինելու է մեծամասնութիւն:

Եթէ խօսքը հրապարակային հիմքերի մասին է, յայտնքն ՀՀԿ աշխատանքն անցած տարիներին, երկրի բարեփոխման ընթացքը, քաղաքական եւ տնտեսական համակարգերի ազատականացումը, իրաւունքի պաշտպանութեան եւ քաղաքացիական ազատութեան ապահովման մակարդակի բարձրացումը, սոցիալ-տնտեսական զարգացումը, ու այդ կարգի այլ բաներ, ապա Հովիկ Աբրահամեանի համոզուածութիւնը թերեւս կարելի է բացատրել կամ հիմնաւորել հենց իր իսկ այն յայտնի արտայայտութեամբ, որ քաղաքականութեան մէջ ինչքան էլ պէտք չէ: Բանն այն է, որ ցանկացած համապետական ընտրութիւնից առաջ իշխանութեան վերընտրութեան համար անհրաժեշտ հրապարակային հիմքերի ներկայիս վիճակի պայմաններում, միայն ինչքան էլ չառաջնորդուելու դէպքում է հնարաւոր ունենալ ընտրութեանը մեծամասնութիւն ձեռք բերելու համոզուածութիւն:

Այդ բոլոր ուղղութիւններով իրավիճակը երկրում ոչ միայն չի բարելաւուել, այլ տեղի է ունեցել կամ հետընթաց, կամ ճահճացում: Ի վերջոյ, եղել է Մարտի 1, չկայ այդ օրուայ հետ կապուած որեւէ իրական բացայայտում, շարունակում են լինել քաղաքատարկեալներ, սոցիալ-տնտեսական ճգնաժամը խորացել է, գնաճը քաղաքացիների համար հասել է անձնական անվտանգութեան ապառնալիքի աստիճանի, եւ այլն, եւ այլն, եւ այլն:

Բայց գաղտնիք չէ, այդ թւում յատկապէս Հովիկ Աբրահամեանի համար, որ Հայաստանում իշխանութեան համար ընտրութեան արդիւնքի ձեւաւորման շարքում կարեւորը ոչ այդքան հրապարակային հիմքերն են, որքան ոչ հրապարակայինները: Թէ որոնք են դրանք, երեւի թէ գիտէ թէ Հովիկ Աբրահամեանը, ու թէ հասարակութեան իւրաքանչիւր անդամ, ով գոնէ մէկ անգամ փորձել է հետեւել Հայաստանի համապետական որեւէ ընտրութեան: Իսկ ահա թէ ինչ վիճակում են այդ «ոչ հրապարակային հիմքերը», դա արդէն հասարակութեան ամէն անդամ չէ, որ կարող է իմանալ: Բայց Հովիկ Աբրահամեանը հաստատ չի մացողներից չէ: Հետեւաբար, երեւի թէ ինչ որ բան գիտէ, որ համոզուած է, թէ 2012-ի ընտրութեանը ՀՀԿ-

ն նորից լինելու է մեծամասնութիւն:

Իսկ կարող է արդեօք Հովիկ Աբրահամեանը սխալուել իր իմացութեան մէջ: Կարող է արդեօք պատահել այնպէս, որ նա պարզապէս չտիրապետի «ոչ հրապարակային հիմքերի» իրական վիճակին եւ գերագնահատի իշխանութեան հնարաւորութիւնը: Քիչ հաւանական է, բայց չի բացառուում: Թէեւ այդ դէպքում էլ գրեթէ բացառուում է, որ նա խոստովանէր, թէ 2012 թուականի ընտրութեանն իշխանութիւնը կարող է դժուարութիւն ունենալ:

Դա կը լինէր թուլութեան նշան, իսկ դրա համար համակարգը Հովիկ Աբրահամեանին չէր ների: Դրա համար էլ նա ամէն դէպքում պէտք է յայտարարէր, որ մեծամասնութիւն են լինելու նաեւ այս անգամ: Ու չի բացառուում, որ այդպէս էլ կը լինի: Հաւանականութիւնը մեծ է, ինչպէս միշտ: Պարզապէս հարցն այն է, թէ որն է լինելու դրա գինը: Հայաստանում, սկսած 1991 թուականից, ամէն ընտրութիւնից յետոյ միշտ էլ մեծամասնութիւն է կազմել իշխանութիւնը: Ամբողջ ինդիքն այն է, թէ ինչ գին է դրա համար վճարել պետութիւնը: Այդ իմաստով, 1995 թուականից ի վեր տեղի ունեցած ընտրութիւններում պետութեան վճարած գինը միշտ էլ եղել այնպիսին, որ այդ գնով ընտրութիւն անցկացնելը պարզապէս «ձեռք չի տալիս»:

Ընդ որում, քանի որ իրավիճակի գլոբալ պատկերը կրկնուել է միշտ, բայց նրբերանգները միշտ էլ տարբեր են եղել, այժմ ստեղծուել է մի վիճակ, որ թերեւս ոչ միայն պետութեան, այլ հենց իշխանութեան համար «ձեռք չի տալիս» այն գինը, որով միշտ ձեռք է բերուում մեծամասնութիւնը ընտրութեան ժամանակ: Երբ ընտրութիւնը պետութիւնից ու հասարակութիւնից տարեցտարի խլում է ամէն ինչ, յետոյ արդէն սկսում է խլել իշխանութիւնից:

Դրա վառ վկայութիւնը 2008 թուականի նախագահի ընտրութիւնն էր, դրա ընթացքում ի յայտ եկած ներիշխանական լուրջ ինդիքները, որոնք հետագայ երկու տարիներին անցան այսպէս ասած ընդլայտակ, բայց չվերացան ամենեւին եւ պարբերաբար դուրս են սպրդում յաճախ բոլորովին անմեղ պաշտօնական հարցում կարեւորը ոչ այդքան հրապարակային հիմքերն են, որքան ոչ հրապարակայինները: Թէ որոնք են դրանք, երեւի թէ գիտէ թէ Հովիկ Աբրահամեանը, ու թէ հասարակութեան իւրաքանչիւր անդամ, ով գոնէ մէկ անգամ փորձել է հետեւել Հայաստանի համապետական որեւէ ընտրութեան: Իսկ ահա թէ ինչ վիճակում են այդ «ոչ հրապարակային հիմքերը», դա արդէն հասարակութեան ամէն անդամ չէ, որ կարող է իմանալ: Բայց Հովիկ Աբրահամեանը հաստատ չի մացողներից չէ: Հետեւաբար, երեւի թէ ինչ որ բան գիտէ, որ համոզուած է, թէ 2012-ի ընտրութեանը ՀՀԿ-

ն նորից լինելու է մեծամասնութիւն: Իսկ կարող է արդեօք Հովիկ Աբրահամեանը սխալուել իր իմացութեան մէջ: Կարող է արդեօք պատահել այնպէս, որ նա պարզապէս չտիրապետի «ոչ հրապարակային հիմքերի» իրական վիճակին եւ գերագնահատի իշխանութեան հնարաւորութիւնը: Քիչ հաւանական է, բայց չի բացառուում: Թէեւ այդ դէպքում էլ գրեթէ բացառուում է, որ նա խոստովանէր, թէ 2012 թուականի ընտրութեանն իշխանութիւնը կարող է դժուարութիւն ունենալ:

Դա կը լինէր թուլութեան նշան, իսկ դրա համար համակարգը Հովիկ Աբրահամեանին չէր ների: Դրա համար էլ նա ամէն դէպքում պէտք է յայտարարէր, որ մեծամասնութիւն են լինելու նաեւ այս անգամ: Ու չի բացառուում, որ այդպէս էլ կը լինի: Հաւանականութիւնը մեծ է, ինչպէս միշտ: Պարզապէս հարցն այն է, թէ որն է լինելու դրա գինը: Հայաստանում, սկսած 1991 թուականից, ամէն ընտրութիւնից յետոյ միշտ էլ մեծամասնութիւն է կազմել իշխանութիւնը: Ամբողջ ինդիքն այն է, թէ ինչ գին է դրա համար վճարել պետութիւնը: Այդ իմաստով, 1995 թուականից ի վեր տեղի ունեցած ընտրութիւններում պետութեան վճարած գինը միշտ էլ եղել այնպիսին, որ այդ գնով ընտրութիւն անցկացնելը պարզապէս «ձեռք չի տալիս»:

Ընդ որում, քանի որ իրավիճակի գլոբալ պատկերը կրկնուել է միշտ, բայց նրբերանգները միշտ էլ տարբեր են եղել, այժմ ստեղծուել է մի վիճակ, որ թերեւս ոչ միայն պետութեան, այլ հենց իշխանութեան համար «ձեռք չի տալիս» այն գինը, որով միշտ ձեռք է բերուում մեծամասնութիւնը ընտրութեան ժամանակ: Երբ ընտրութիւնը պետութիւնից ու հասարակութիւնից տարեցտարի խլում է ամէն ինչ, յետոյ արդէն սկսում է խլել իշխանութիւնից:

Դրա վառ վկայութիւնը 2008 թուականի նախագահի ընտրութիւնն էր, դրա ընթացքում ի յայտ եկած ներիշխանական լուրջ ինդիքները, որոնք հետագայ երկու տարիներին անցան այսպէս ասած ընդլայտակ, բայց չվերացան ամենեւին եւ պարբերաբար դուրս են սպրդում յաճախ բոլորովին անմեղ պաշտօնական հարցում կարեւորը ոչ այդքան հրապարակային հիմքերն են, որքան ոչ հրապարակայինները: Թէ որոնք են դրանք, երեւի թէ գիտէ թէ Հովիկ Աբրահամեանը, ու թէ հասարակութեան իւրաքանչիւր անդամ, ով գոնէ մէկ անգամ փորձել է հետեւել Հայաստանի համապետական որեւէ ընտրութեան: Իսկ ահա թէ ինչ վիճակում են այդ «ոչ հրապարակային հիմքերը», դա արդէն հասարակութեան ամէն անդամ չէ, որ կարող է իմանալ: Բայց Հովիկ Աբրահամեանը հաստատ չի մացողներից չէ: Հետեւաբար, երեւի թէ ինչ որ բան գիտէ, որ համոզուած է, թէ 2012-ի ընտրութեանը ՀՀԿ-

«ԼՐԱԳԻՐ»

ՍԿՁԲՈՒՄ ՓԱՍՏԸ, ՅԵՏՈՅ՝ ՄԱՅԱԾԸ

ԱՐԱՄ ԱՐԱՀԱՄԵԱՆ

Շաբաթ օրը youtoub-ում գտայ սահմակեցուցիչ մի տեսագրութիւն. կիսամերկ մի սաղիստ, ըստ երեւոյթի՝ «սպայ», ամենագարշելի ձեւով ստորացնում է գինուորական հագուստով երկու պատանիների՝ քաշելով նրանց ականջները եւ ապտակելով նրանց: Ըստ որոշ յատկանիշների, տեսագրութիւնը կատարուել է հենց մեր՝ հայկական բանակում: Իհարկէ, չի կարելի լիովին բացառել, որ այդ նիւթը պատրաստել է մեր հակառակորդը՝ ակնյայտ նպատակներով: Բայց այդ դէպքում ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնը պէտք է դրա համոզիչ, անհերքելի ապա-

պէտք է անդրադառնալ բուն փաստին, յետոյ միայն՝ այն տարածողներին:

Իսկ ընդհանրապէս, եթէ ուզում էք իմանալ, այդ տեսանիւթն արտացոլում է իշխանութեան հուլիւսար: Ոչ միայն այսօրուայ Հայաստանի իշխանութեան, այլեւ բոլոր ժողովուրդների եւ բոլոր ժամանակների՝ սկսած նախնադարեան-համայնական կարգերից: Ինչի համար են մարդիկ ձգտում իշխանութեան: Փողն այստեղ երկրորդական գործօն է. նրանց պէտք է գտնել թոյլին եւ քաշել նրա ականջները: (Յիշու՞մ էք, երկրորդ նախագահը ուղիղ տեքստով էր խօսում իր՝ նման ցանկութեան մասին): Մարդկանց ինքնահաս-

Թոյլ կը տամ ինձ ենթադրել, որ այդ յանցագործին տեսանիւթի տարածման առաջին իսկ օրը փախցրել են Հայաստանից, եւ նա արդէն մի քանի օր է՝ հրաշալի ժամանակ է անցկացնում Մոսկուայի ռեստորաններում. Շատ կ'ուզէի սխալուել եւ տեսնել, թէ ինչպէս է այդ վիժուածքը կանգնած դատարանի առաջ

ցոյցները բերի:

ՊՆ-ն արձագանքել է այդ կադրերին, եւ այդ արձագանքի մէջ որոշակի «խորամանկութիւն» կայ՝ «տեսանիւթի ցածր որակը թոյլ չի տալիս պարզորոշ տեսնել դէմքեր»: Սաղիստի կիսադէմը պարզորոշ երեւում է, յատկապէս տեսագրութեան վերջում: Եթէ մեր բանակում կայ այդ դէմքով մարդակեր, նրա բացայայտումը ՊՆ-ի համար կէս ժամուայ գործ պէտք է լինէր: Եթէ նման «մարդ» պէտք է յայտարարէր, որ տարածուած նիւթը «բեմականացում է»: Ի վերջոյ, հաւանաբար, այդպէս էլ կ'ասուի, ինչին, բնականաբար, ոչ ես, ոչ էլ մեր մնացած քաղաքացիները չենք հաւատայ: Թոյլ կը տամ ինձ ենթադրել, որ այդ յանցագործին տեսանիւթի տարածման առաջին իսկ օրը փախցրել են Հայաստանից, եւ նա արդէն մի քանի օր է՝ հրաշալի ժամանակ է անցկացնում Մոսկուայի ռեստորաններում: Շատ կ'ուզէի սխալուել եւ տեսնել, թէ ինչպէս է այդ վիժուածքը կանգնած դատարանի առաջ:

ՊՆ-ի յայտարարութեան մէջ կայ եւս մի թէմա, որը յատկանշական է ընդհանրապէս մեր իշխանական համակարգի համար. «ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնը խստագոյնս դատապարտում է ՀՀ գինուած ուժերի վարկաբեկմանն ու հեղինակագրկմանն ուղղուած նման կարգի նիւթերի պատրաստումը եւ կանխամտածուած տարածումը»: Այսինքն՝ կարելոր չէ, թէ ինչ է տեղի ունեցել, կարելոր է, թէ ով է դրա մասին տեղեկատուութիւն տարածում: Երբ «Առաւօտում» ռեւէ պաշտօնեայի մասին որեւէ բացասական նիւթ է տպագրուում, զայրացած իշխանաւորը գնազահարում է իմբագրութիւն եւ ոչ թէ հերքում է գրուածը, այլ հետաքրքրուում՝ այդ ո՞վ է տեղեկատուութիւնը հարորդել՝ հասկանալու համար, թէ ով է «պատուէր տուել» եւ ով է իր վրայ «բռնկա գլորում»: Ենթադրենք, այդ նիւթը պատրաստել եւ տարածում է աղբերջանական մի լրտես. եթէ այն կեղծուած չէ՝ ի՞նչ տարբերութիւն: Սկզբում

տատուելու այդ պաթոլոգիկ ձգտումը տարբեր տեղեր տարբեր՝ աւելի կամ պակաս «քաղաքակիրթ» ձեւեր է ընդունում: Բայց հուլիւսար նոյնն է: Իդէալական տարբերակն այն է, որ աշխարհում ոչ մի իշխանութիւն չլինէր: Յաւօք սրտի, դա հնարաւոր չէ: «ԱՌԱԻՕՏ»

ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՐԿ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ֆեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail),
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒԲԵՐՈՒ
massisweekly.com

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԻՐԱԲԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ՝ ԶԻՆՈՒԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Հելսինկեան քաղաքացիական ասամբլիայի վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցը եւ Հայաստանի հելսինկեան ասոցիացիայի ղեկավար Միքայէլ Դանիէլեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցներում իրենց կարծիքներն ու մտահոգութիւններն են հնչեցնում Հայաստանի Զինուած ուժերում ստեղծուած իրավիճակի կապակցութեամբ:

Հելսինկեան քաղաքացիական ասամբլիայի վանաձորի գրասենեակի տեղեկութիւններով, վերջին երկու ամիսների ընթացքում Զինուած ուժերում խաղաղ պայմաններում գոհուել է 10 գինձառաջող: Մահուան ելքով դէպքերի մի մասը, ըստ պաշտօնական աղբիւրների, ինքնասպանութիւններ են:

Իրաւապաշտպան Արթուր Սաքունցը, անդրադառնալով վայքի զօրամասերից մէկում պայմանագրային գինձառաջող Արթուր Յակոբեանի մահուան (նախնական տեղեկութիւններով՝ ինքնասպանութեան) փաստին, ասաց. - «Այսպէս կոչուած ինքնասպանութեան վարկածը կամ փաստը, երբ որ հանդիսանում է օրինաչափութեան մի շղթան, աւելի շուտ ցոյց է տալիս բանակում, գինուած ուժերում տիրող հակամարդկային մթնոլորտի մասին»:

Իրաւապաշտպանի խօսքով, այս շղթայի շարունակութիւնը պէտք է որ անհանգստացնի բանակի ղեկավարութեանը եւ ստիպի արմատական գործողութիւններ կատարել՝ իրավիճակը փոխելու ուղղութեամբ:

Արթուր Սաքունցը թերահաւատ է այդ առումով: «Որովհետեւ նախորդ դէպքերի վերաբերեալ նրանց պահուածքը հիմք չի տալիս լաւատեսօրէն տրամադրուել: Բանակի ղեկավարութիւնը եւ իշխանութիւնը շարունակում են իրենց նախկին գործելակերպը՝ կոծկել յանցագործութիւնները», - փաստարկեց նա:

Հայաստանի հելսինկեան ասոցիացիայի ղեկավար Միքայէլ Դանիէլեանի կարծիքով, գրեթէ անհնարին է բանակում իրականացնել պատշաճ վերահսկողութիւն, քանի որ դա «փակ համակարգ է»:

Բանակում, նրա խօսքով, չպէտք է լինեն քրէական աշխարհին բնորոշ երեւոյթներ. - «Եթէ կայ հասկացողութիւն «չաստ նայող», ուրեմն խօսել, թէ ինչ-որ բան ուզում են փոխել կամ փոխուել է բանակում՝ անիմաստ է»:

Հարցին, թէ հնարաւոր է բանակում առկայ խնդիրները լուծել հասարակական կազմակերպութիւնների ճնշման եւ վերահսկողութեան ներքոյ, իրաւապաշտպանը արձագանքեց. - «Ինձ թուում է՝ այո»:

Արթուր Սաքունցի կարծիքով, բանակում իրավիճակը փոխելու, հանրութեանը հաշուետու լինելու «հասարակական պահանջ» պէտք է լինի:

«Ինձ աւելի շատ մտահոգում է ոչ միայն քաղաքացիական իրական վերահսկողութեան բացակայութիւնը Զինուած ուժերի նկատմամբ, այլ Զինուած ուժերում յանցագործութիւնների վերաբերեալ իրաւապահ մարմինների ոչ լիարժէք պահուածքը: Այսինքն՝ երբ որ նրանք իրենց գործառնութիւնները իրականացնում են ոչ թէ յանցագործութիւնը բացառապէս, այլ յանցագործութիւնները կոծկելու»:

Այս կապակցութեամբ Միքայէլ Դանիէլեանը յիշատակեց անցեալ տարի խոշտանգումների հետեւանքով բանակում մահացած գինձառաջող Անդրանիկ Հայրապետեանի դէպքը: Փոխզնդապետ Արթուր Պօղոսեանը, ով խոշտանգումների համար դատապարտուել էր 3.5 տարուայ ազատազրկման, ըստ իրաւապաշտպանի, համաներմամբ ազատ է արձակուել ու շարունակում է ծառայութիւնը նոյն զօրամասում:

ՍԴՅԿ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ Է ՅՂԵԼ ԳԻՒԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի վարչի Մարմինը հրապարակային հարցեր է յղել ՀՀ գիւղատնտեսութեան նախարար Գերասիմ Ալաւերդեանին՝ դրանցում հնչեցնելով գիւղի վերաբերեալ իրենց մտահոգութիւնները:

Կուսակցութիւնը փորձում է նախարարից պարզել, թէ քանի՞ տներ են դատարկ Հայաստանի գիւղերում, ինչո՞ւ է գիւղացին լքում գիւղը եւ հողը, ինչո՞ւ է Հայաստանի համար գերթանկարժէք վարելահողի 50 %-ն անմշակ:

Հարցերի հեղինակներին յուզում է նաեւ այն, թէ ինչո՞ւ է Հայաստանում 1 կգ կարագին համարժէք կաթը (21 լիտր) կարագից 3 անգամ թանկ, ինչո՞ւ է բացատրուում հացի թանկացումը, եթէ նոյնիսկ թանկացած ալիւրի պարագայում հացը վաճառուում է իր ինքնարժէքից 2-4 անգամ թանկ, ինչո՞ւ է մսի, կաթնամթերքի եւ այլ սննդամթերքների ներմուծումը ծտարում կրկնապատկուել, երբ բնակչութիւնը զգալի նուազել է, միզուցէ գիւղացիին է դադարել արտադրել:

Նախարարին ուղղուել են նաեւ մի շարք այլ հարցադրումներ՝ ինչո՞ւ է գիւղացին վճարում ինքնահոս, սպասարկման ոչ մի ծախս չունեցող ջրից օգտուելու համար, կատարուել են արդեօք ծրագրով նախատեսուած վերջին 3 տարում 5000 հա խաղողի այգետնկումների, 19 000 հա անտառապատման աշխատանքները, 30 տոննա բուսական արտադրանքի հիմնումը, եթէ այո, ապա որտե՞ղ, պատասխանատու է արդեօք գիւղնախարարութիւնը երկրի պարենային անվտանգութիւնը ապահովելու համար, եւ վերջին 3 տարում ինչքանո՞ւ է այն ամրապնդուել ներքին արտադրանքի հաշուին, ինչի՞ հաշուին է աւելանում գիւղարտադրանքը՝ արտադրողի (գիւղացու), մշակուող հողի եւ անասնազլխաքանակի շարունակական եւ զգալի նուազման պարագայում, ճիշդ չէ՞ր լինի արդեօք ԱԺ դահլիճի վերանորոգման վրայ ծախսուած գումարն ուղղել գիւղատնտեսական անբարենպաստ տարուայ հետեւանքները մեղմելու գործին եւ այլն:

Նախարարից փորձել են ճշդել նաեւ, թէ ի՞նչ համագործակցութիւն է հաստատուել Հայաստանի Ազրբայձին համալսարանի եւ Ադրբեյջանի գիւղիմաստիտուտի միջեւ «Բնօգտագործման էկոնոմիկան եւ Հարաւային Կովկասում էկոլոգիական կրթութեան բարեփոխումները» նախագծի շրջանակներում:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ԱՐՄԵՆԻԱ 2010» ՎԱՐԺԱՆՔԸ



ՆԱՏՕ-ի կողմէ կազմակերպուած «Արմենիա-2010» վարժանքի մասնակիցները

Կոտայքի մարզի Լուսակերտ բնակավայրի մօտ Սեպտեմբեր 12-ին մեկնարկել է ՆԱՏՕ-ի կողմից անցկացուող «Արմենիա-2010» վարժանքը:

Վարժանքը տեւելու է մինչեւ Սեպտեմբերի 17-ը: Մասնակցում են 28 երկրների եւ 5 միջազգային կազմակերպութիւնների 333 ներկայացուցիչներ: Մի փոքր աւելի ներկայացուցիչներ ունի Հայաստանը:

ՆԱՏՕ-ի կողմից վարժանքը համակարգում է Եւրատլանտեան աղէտների արձագանքման համակարգման կենտրոնը, իսկ Հայաստանի կողմից՝ Արտակարգ իրավիճակների նախարարութիւնը:

Փառատօնի նպատակը հայրենական արտադրողի դրական իմիջի ձեւաւորումն է, հայկական թե-

ձակների նախարարութիւնը: «Սա շատ կարեւոր գորավարժանքներ են, որովհետեւ առաջին անգամ են (անցկացուած) Հայաստանի Հանրապետութեան տարածքում», - լրագրողներին ասաց Արտակարգ իրավիճակների նախարար Արմէն Երիցեանը՝ շարունակելով. - «Ես գտնում եմ, որ մենք սովորելու բան ունենք: Ճիշդ է, իրենք էլ որոշակի բաներ մեզանից սովորելու ունեն: Բայց ուսումնասիրութեան քննարկները եւ շատ եմ կարեւորում, որովհետեւ աղէտների ու կերպերի նուազեցումը մեր երկիրը մէկ քայլ եւս տանում է առաջ»:

Թեւ արդիւնաբերութեան քարոզը, իշխանութիւնների եւ հասարակութեան՝ ոլորտի խնդիրների վրայ ուշադրութիւն հրաւիրելը:

ՍԿՍԻՈՒՄ Է ՀԱՆՐԱՅԻՄՆԵՐԻ ՓՈՒԼ

Ժողովրդահայրենասիրական ուժերը խոստանում են արդիւնաւէտ հանրահաւաքներ՝ երկրի առաջ ծառայած մի շարք խնդիրներ լուծելու համար: Սեպտեմբեր 14-ին նրանք հաւաքուել էին ՀԺԿ գրասենեակում եւ յայտարարեցին, որ 15 օրից կը յայտնեն, թէ որ գերատեսչութեան առաջ է լինելու իրենց առաջին միջոցառումը: «Ժողովրդահայրենասիրական անհատ քաղաքացիների» հասարակական խորհրդի նախագահ Իշխան Թովմասեանը «Ա1+»-ին վստահեցրեց, որ իրենց թիւը հասնում է 4000-ի եւ իրենք ի տարբերութիւն այլ ուժերի, եթէ հաւաքուել են, չեն ցրուելու. «Կը կանգնենք

այնքան, մինչեւ գերատեսչութիւնը ընդունի իր սխալը եւ ուղղի»:

Նրանք նախապէս տարբեր գերատեսչութիւնների յանձնելու են իրենց կոչ-դիմումը, որով արւում են 10 առաջարկ:

«Չորս միլիարդի համող արտաքին պարտք ունեցող իշխանութիւնները ոչ թէ պէտք է նստեն եւ մտածեն՝ օրը մի յանձնաժողով, գերատեսչութիւն, նախարարութիւն ստեղծելու, այլ ճիշդ հակառակը, անհրաժեշտ է սկսել գոյութիւն ունեցող արդէն իսկ չափից աւել ուռճացած վարչապարատային սիստեմի կրճատման գործընթացը», - սա առաջարկներից մէկն է:

ԵՐԵՒԱՆՈՒՄ ԿԸ ԿԱՅԱՆԱՅ «ԳՆԵՆՔ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԸ» ԿԱՐԳԱՆՕՍՈՒՎ ՓԱՌԱՏՕՆ

Սեպտեմբերի 18-19-ը Երեւանի Բուսաբանական այգու տարածքում կը կայանայ «Գնենք հայրենականը» կարգախօսով փառատօնը:

Միջոցառման շրջանակներում կ'անցկացուի Հայաստանի թեթեւ արդիւնաբերութեան ապրանքների ցուցահանդէս-վաճառք, կը կազմակերպուեն այդ ոլորտի խնդիրների քննարկմանը նուիրուած

«կլոր սեղան», համերգ եւ բարեգործական ակցիա:

Ցուցահանդէս-վաճառքին կը մասնակցեն թեթեւ արդիւնաբերութեան շուրջ 20 ձեռնարկութիւններ: Միջոցառումը կազմակերպում է Հայաստանի Արդիւնաբերողների եւ ձեռնարկատէրերի միութիւնը: Պաշտօնական աջակցութիւն են ցուցաբերում UN Global Compact Armenia ծրագիրը եւ

ԼՈՒՐԵՐ

ԱՐԱՍ ԱՐՔ. ԱԹԵՇԵԱՆ. «ՉԵՍ ԿԱՐՈՂ ԱՍԵԼ՝ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱԻՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՓԱԿՈՒՂԻ Է ՄՏԵԼ, ԹԵ ՈՉ»

Պոլսոյ Հայոց պատրիարքի փոխանորդ Արամ Արքեպիսկոպոս Աթէշեանը հարցազրոյց է տուել թուրքական «Սթար» պարբերականին, որում անդրադարձել է մէկ շաբաթից Ադրթամարի Սուրբ Խաչ եկեղեցում մատուցուելիք պատարագին, ինչպէս նաեւ հայթուրքական յարաբերութիւններին:



Արամ Արքեպիսկոպոս Աթէշեան

- Ինչպէ՞ս էք մեկնաբանում հայկական եկեղեցու կողմից Սուրբ Խաչի պատարագին մասնակցելու բոյկոտը:

- Մենք ստացել ենք պատարագի համար թույլտուութիւն: Սա մեծ առաջընթաց է, հայ հասարակութեան համար շատ կարեւոր երեւոյթ:

Խաչի տեղադրումը չետաձգուեց: Մեր իշխանութիւնները չեն ասում, որ իսաչը չեն տեղադրելու: Այն լինելու է նաեւ պատարագի ժամանակ, իսաչը դրուելու է եկեղեցու մուտքի մօտ, իսկ արդէն արարողութիւնից յետոյ իշխանութիւններն այն կը տեղադրեն եկեղեցու գմբէթին:

- Ինչպէ՞ս էք վերաբերում Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման գործընթացին:

- Հարեւան պետութիւնների հետ ստացուեց կարգաւորել յարաբերութիւնները, սակայն Հայաստա-

նի հետ՝ ոչ: Դամասկոսի, Բէյրութի եւ Մոսկուայի հետ անցազրային համակարգը չեղեալ յայտարարուեց, ճանապարհները բացուեցին: Չեմ կարող ասել՝ Հայաստանի եւ թուրքիայի միջեւ յարաբերութիւնների կարգաւորման գործընթացը փակուղի է մտել, թէ ոչ: Պատճառը իսաչը չէ: Երկու երկրների միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ չկան: Եւ սահմանների բացման համար առանց նախապայմանների մի համաձայնութիւն է անհրաժեշտ:

Թուրքիայում հազարաւոր հայեր են ապրում: Թող սահմանները բացուեն, երկու ժողովուրդն էլ հանդիստ գնան-գան: Բարեկամութեան մէջ առաջինը դա եմ պատկերացնում: Նախ պէտք է ժողովուրդներն իրար մօտ լինեն:

HayNews.am

ՐԱՅԱՍՏԱՆԸ ՆԱՅԱՆՁԵԼ Է ԲԻԶՆԵՍԻ ՐԱՍԱՐ ԼԱԻՎՈՅՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ

«Ֆորպս» հանդէսը հրապարակել է աշխարհում տնտեսական գործունէութիւն սկսելու համար լաւագոյն երկրների ցանկը, որտեղ Հայաստանը 96-րդ տեղում է յայտնուել: Նախորդ տարի Հայաստանն այս ցուցակում 94-ն էր:

Այս տարի ուսումնասիրուել է իրավիճակը աշխարհի 128 երկրներում:

Ընդհանուր արդիւնքների ստացման համար դիտարկուում են մի քանի բաղադրիչներ, ներառեալ՝ երկրի բնակչութեան թիւը, մէկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդիւնքը, առեւտրի ծաւալները:

Հեղինակաւոր պարբերականը ուսումնասիրում է նաեւ երկրի տնտեսութեան առնչուող այլ բաղադրիչներ, մասնաւորապէս՝ Հայաստանում ամենամտահոգիչը համարելով հարկային բեռի ծանրութիւնը, նաեւ՝ սեփականութեան իրաւունքի խնդիրը. այստեղ Հայաստանը 106-րդ արդիւնքն է գրանցել, երկրում կոտուպցիոն երեւոյթների առկայութեան իմաստով՝ 95-րդը: Ներդրումների պաշտպանութեան առումով Հայաստանը 74-րդ տեղում է:

«Մի քանի տարիների ընթացքում արձանագրուած երկնիշ տնտեսական աճից յետոյ, Հայաստանը այսօր դիմակայում է լուրջ տնտեսական անկմանը», - գրել է «Ֆորպս»-ը, նշելով, թէ Հայաստանում 2009 թվականին համախառն ներքին արդիւնքի առնուագն 15 տոկոս նուազում է արձանագրուել՝ չնայած խոշորածաւալ վարկերին,

որ կառավարութիւնը վերցրել էր նուիրատու կազմակերպութիւններից եւ օտար պետութիւններից:

Անկումային նման կտրուկ տեմպերի հիմնական պատճառը պարբերականը համարել է շինարարութեան եւ արտերկրից, մասնաւորապէս՝ Ռուսաստանից ստացուող դրամական փոխանցումների՝ սրանսֆերտների ծաւալների շեշտակի նուազումը:

Հայաստանը, խորհուրդ է տալիս հեղինակաւոր պարբերականը, պէտք է հետամուտ լինի լրացուցիչ տնտեսական բարեփոխումների, որպէսզի վերականգնի տնտեսական աճը եւ կատարելագործի տնտեսական մրցունակութեան եւ զբաղուածութեան հնարաւորութիւնները, յատկապէս՝ հաշուի առնելով իր երկու ամենամօտ հարեւանների կողմից՝ Թուրքիայից եւ Ադրբեջանից տնտեսական մեկուսացման գոյութիւն ունեցող խնդիրը:

Բիզնես հիմնելու առումով նախկին խորհրդային երկրներից ամենալարմարը համարուել է Բալթեան երկրները:

Հարեւանները նոյնպէս Հայաստանից առաջ են անցել՝ Վրաստանը 61-րդն է, Ադրբեջանը՝ 79-րդը:

Հայաստանից յետոյ՝ 97-րդը Ռուսաստանն է յիշատակուած:

Նախորդ տարուայ նման, առեւտուր սկսելու համար ամենաբարենպաստ պայմանները աշխարհում, Դանիան է ստեղծում: Երկրորդ տեղում է յայտնուել Հոնկոնգը, երրորդը՝ Նոր Զելանդիան է:

«ԲԱՅԸ, ՈՐ ԱՌԱՋԱՅԵԼ Է ՐՐԱՆԴ ՏԻՆՔԻ ԿՈՐՈՒՄՏՈՎ, ՉԻ ԿԱՐՈՂ ԼՐԱՑՈՒԵԼ»

Այն բացը, որ առաջացել է Հրանդ Տինքի կորուստով, չի կարող լրացուել, ասել է «Ակօս»-ի նոր խմբագիր Ռոբերտ Կոպլաշը թերթի սպաննուած խմբագրապետի տարեդարձի կապակցութեամբ Zaman պարբերականին տուած հարցազրոյցում. Սեպտեմբերի 15-ին լրանում է Տինքի ծննդեան 56-ամեակը:



«Ոչ ոք ի վիճակի չէ այն [այդ բացը] լրացնել, չնայած այժմ աւելի շատ երիտասարդներ են պատրաստ խօսել քաղաքական հարցերի շուրջ», - ասել է Կոպլաշը: «Հրանդ Տինքը թուրքիայի հայ համայնքի գործն էր թեթեւացնում: Ի դէմս Հրանդ Տինքի՝ թուրքիայի հայերը գտել էին համարձակ ու ազնիւ մեկին, ով խօսում էր իրենց խնդիրների եւ շահերի մասին», - նշել է «Ակօս»-ի նոր խմբագիրը:

Նշելով, որ «Հրանդ Տինքը կարծես դարձել էր թուրքիայի հայ համայնքի միակ խօսնակը», Zaman-ի թղթակիցը հարցնում է, թէ արդեօք էլ ո՞վ կարող է ներկայացնել համայնքը:

Ռոբերտ Կոպլաշն ասում է, որ իդէալական կը լինէր, եթէ աւելի շատ հայեր եւ ոչ հայեր հաւաքուէին ոչ կառավարական կազմակերպութիւններում եւ արտայայտեն իրենց մտքերը տարբեր քաղաքացիական հարթակներում, սակայն իրականում ամէն ինչ լրիւ այլ է: Կան մարդիկ, որ ընտրուում են հիմնադրամների ղեկավարներ, չնայած որոշակի խնդիրներ կան նրանց ընտրութեան հետ կապ-

ուած, սակայն նրանք իրենց պաշտօնները ստանում են թուրքահայ հանրութեան ձայների շնորհիւ: «Մենք պէտք է նրանց խրախուսենք, որ աւելի շատ արտայայտուեն, աւելի բաց խօսեն, սակայն պէտք է նաեւ հաշուի առնենք այն փաստը, որ այդ հիմնադրամները ստեղծուել են հիմնականում եկեղեցիներն եւ դպրոցները պահպանելու համար, եւ նրանց գործունէութեան ոլորտն ու ազդեցութիւնը սահմանափակ է», - նշում է «Ակօս»-ի խմբագիրը:

Կոպլաշը յիշեցնում է, որ աւելի վաղ՝ մինչեւ թուրքական հանրապետութեան ի յայտ գալը, համայնքը ընտրում էր իր ներկայացուցիչներին, սակայն դա վերացուեց հանրապետութեան ստեղծումից յետոյ: Եթէ այժմ էլ նման մեխանիզմ լինէր, ապա, ըստ «Ակօս»-ի խմբագրի, կարիք չէր լինի խօսելու, թէ ով է ներկայացնելու թուրքիայի հայ համայնքը. կը լինէին ընտրովի ներկայացուցիչներ, որոնք կը խօսէին թուրքահայերի քաղաքական եւ մշակութային խնդիրների շուրջ:

ՐԱՅ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՊԱՏԱՆԴ ՊԱՅՈՒԱԾ ԵՆ

Շարունակուած էջ 1-էն

էինք իսթանպուլ մեր կողմից կազմակերպուած տարածաշրջանային կոնֆերանսին մասնակցելու համար: Մեզ հետ նոյն չուերթով Երեւանից ժամանած մօտ երկու տասնեակ ուղեւորների թուրքական իմիգրացիոն ծառայութիւնները յատուկ ստուգման եւ հարցապնդման էին ենթարկել: Մասնաւորապէս, ապացոյցներ էին պահանջում՝ թէ արդեօք եկածները մնայու, կեցութեան եւ վերադարձի համար բաւարար միջոցներ ունեն: Շեշտեմ, որ այդ կարգի ստուգման ենթարկել էին բացառապէս միայն Երեւանից ժամանած չուերթի ուղեւորներին:

«Ստուգման ենթարկուածների մէջ էին նաեւ Հրանդ Տինք հիմնադրամի կողմից հրաւիրուած մի խումբ այլ լրագրողներից չորսը: Չնայած Հրանդ Տինք հիմնադրամի ներկայացուցիչը, որն ուղեկցում էր այդ խմբին Երեւանից, ներկայացրել էր այդ չորս հոգու

ով լինելը, թուրք ծառայողները շարունակում էին պահանջել, որպէսզի լրագրողները ցոյց տան իրենց մօտ եղած կանխիկ գումարները եւ ապացուցեն, որ ունեն հիւրանոց եւ այլն:

«Իմանալով այդ մասին, ես հրաժարուեցի սահմանային անցակէտը հատել եւ յայտարարեցի, որ կ'անցնեմ միայն ստուգման ենթարկուած լրագրողներից յետոյ: Իմիգրացիոն ծառայութեան պատասխանատուները սպառնացին դեպորտացիայի ենթարկել ինձ: Ես ասացի՝ խնդրեմ: Յետոյ միջադէպին խառնուեցին մեզ դիմաւորող մեր թուրք գործընկերների ներկայացուցիչները եւ Հրանդ Տինքի դուստր Դեւլալ Տինքը, որն ինձ հետ միացել էր հեռախօսով: Մօտ երկու ժամ յետոյ լրագրողներին թոյլ տրուեց անցնել սահմանը»:

Հայ լրագրողներուն հետ նոյն չուերթով իսթանպուլ մեկնած այլ հայ ճամբորդներ յայտնած են թէ, առաջին անգամ է որ նման իրավիճակ կը դիմազարուեն:

ԵՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՎՃՈՒՑ

Շարունակուած էջ 1-էն

«Անատոլու Քուլտուր» մշակութային կենտրոնի ղեկավար Օսման Քաւալան «Ազատութիւն» ռատիոկայանի թղթակցին կարծիք յայտնած է, որ թուրք հասարակութիւնը կը սպասէր այս վճիռին:

«Մենք կը սպասէինք նման որոշմի, քանի որ գիտէինք, որ իշխանութիւնները յատակ պատասխանատուութիւն կը կրեն Հրանդ Տինքին չպաշտպանելու համար՝ իմանալով, որ անոր կեանքը անմիջական սպառնալիքի տակ է», - ըսած է Քաւալա: - «Մենք նաեւ բաւարարուած չէինք սպանութեան յաջորդած հետաքննութեամբ: Այս իմաստով կրնամ ըսել, որ թէլեւ ն էսեմ կարգացած որոշումը ամբողջութեամբ, բայց կը կարծեմ, որ այն ճիշդ է»:

Քաւալա վստահ է, որ Եւրադատարանի որոշումը կոչ է թուրքիոյ իշխանութիւններին՝ յետագային աւելի լուրջ վերաբերուելու նման պարագաներուն:

ԼՈՒՐԵՐ

«ԱԳՐԵՍՈՐՆ ԱՂԻԲԵՋԱՆՆ Է, ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՄԻԱԿ ՎՏԱՆԳԸ ԳԱԼԻՍ Է ԱՂԻԲԵՋԱՆԻՑ»

«ԻՐԱՏԵՍ DE FACTO»-Ի ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՈԱՐՀԿ ՏՆՕՐԵՆ ՌԻԶԱՐԴ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԸ

-Պարոն Կիրակոսեան, ինչպէ՞ս էք գնահատում հայ-ռուսական պայմանագրի նորովի ընթացումը, որպէս ռեգիոնալ քաղաքականութեան արտայայտութիւն:

-Հետաքրքիրն այս ամէնում նախ այն էր, որ պայմանագիրը կնքուեց գրեթէ նոյն օրերին՝ ռուս-վրացական պատերազմից ուղիղ երկու տարի անց: Եւ ապա՝ պայմանագրի ստորագրումը արձանագրումն էր ռուսական ազդեցութեան մեծացման: Ընդ որում, ասուածը չի վերաբերում միայն այս տարածաշրջանին, առնչուած է ընդհանրապէս Ռուսաստանի ռազմավարութեանը՝ յետխորհրդային ողջ տարածքում: Կնքուած, առաւել խորհրդով՝ 49 տարով երկարացուած, պայմանագրով Ռուսաստանը, բացի այլ նպատակներից, ունէր շատ կարեւոր երկու այլ նպատակ եւս՝ մէկը՝ ընդմիջում մեկուսացնել վրաստանին, ապա եւ՝ տրամադրուելիք C-300 հրթիռներով լուրջ շարքերով թիրախներ կառուցել Ադրբեյջանի հետ:



նշանակութեան պայմանագրին. փորձագիտական գնահատականներով՝ այն խիստ պասիւ-հայեցողական էր:

-Ինչն էլ արձանագրում է, որ ԱՄՆ-ի քաղաքականութիւնը տարածաշրջանում բացակայում է, եւ, այո, պասիւ է բաւականին: Մենք տեսնում ենք ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի միջեւ իրականացուող նոր քաղաքականութիւն: Միացեալ Նահանգների արտաքին քաղաքականութիւնն այսօր այլ առաջնահերթութիւններ ունի, եւ ակնառու է, որ այդ քաղաքականութեան մէջ այս պահին Կովկասը չի կարեւորուած:

-Փորձագետները եզրակացնում են, թէ ԱՄՆ-Ռուսաստան տանգեմումներին որոշակի պայմանաւորուածութիւն կայ Յայաստանում տեղակայուած ռազմաբազաների ժամկետի երկարացման առնչութեամբ: Ի՞նչ էք կարծում, կա՞յ նման պայմանաւորուածութիւն:

-Չեմ կարծում, որ այդպէս եղած լինի, չգիտեմ:

-Յամենայն դէպս, ԱՄՆ-ի պետքարտուղարութեան ներկայացուցիչ Մ. Թոմերի բաւականին լոյսալ եւ միակ արձագանքից յետոյ ամերիկեան որեւէ այլ արձագանք չի հնչել այս ողջ ընթացքում:

-Ամերիկան, բոլոր դէպքերում, ներգրաւուած է Կովկասեան տարածաշրջանի խնդիրներին մէջ: Ինչ վերաբերում է հայ-ռուսական այս վերջին համաձայնագրին, ապա ակնյայտօրէն երեւում է, որ, ինչպէս շատ տեղերում, այնպէս էլ այս տարածաշրջանում, ԱՄՆ-ն առաւել շատ ցանկանում է ոչ թէ մրցակցել, այլ համագործակցել Ռուսաստանի հետ:

-Իսկ ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Թիմա Քեյթնեմուս ինչո՞ւ է եկել տարածաշրջան՝ ըստ Ձեզ, եւ ընդհանրապէս, ինչպիսի՞ք են այսօր ամերիկեան առաջնահերթութիւններն այստեղ:

-Կը դժուարանամ ասել, թէ Քեյթնեմուս կոնկրետ ինչ խնդիրներ է քննարկելու տարածաշրջանային լիդերներին հետ: Ընդհանուր վեկտորը, անշուշտ, պարզ է: Ինչ վերաբերում է առաջնահերթութիւններին, դրանք միշտ նոյնն են՝ տարածաշրջանում իրականացուող քաղաքական եւ տնտեսական բարեփոխումներ: Կայ, սակայն, եւս մէկ անչափ կարեւոր առաջնահերթութիւն՝ կանխել Ադրբեյջանին եւ թոյլ չտալ, որ վերջինս ռազմական

գործողութիւններ ծաւալի: Բանն այն է, որ Ադրբեյջանը տարածաշրջանում դարձել է կայունութեան եւ անվտանգութեան միակ սպառնալիքը: Եւ այդ սպառնալիքի կանխումն առաջնահերթութիւն է թէ՛ Միւսկի խմբի, թէ՛ ԱՄՆ-ի, թէ՛ բոլորի համար:

-Իսկ ի՞նչ էք կարծում՝ ՄԱԿ-ի ԳԱ որոշումը որեւէ դեր կը խաղա՞յ տարածաշրջանային զարգացումներում:

-ՄԱԿ-ի ամբիոնում դարբան հիմնախնդրի արծարծումը դիւանագիտական ռազմավարութիւն է Ադրբեյջանի կողմից, որը, անշուշտ, պէտք է ձախողուի, որովհետեւ նաեւ Միւսկի խումբն է դէմ, որ ՄԱԿ-ն այդ խնդիրը քննարկի: Ինչն էլ ցոյց է տալիս, որ Ադրբեյջանը գոհ չէ ԵԱՀԿ-ից, Միւսկի խմբից: Ադրբեյջանը կարծես սարսափած է վարուող դիւանագիտութիւնից, սա է նաեւ պատճառը, որ գնալով աւելի է չաճախակիացնում հակամարտութեան գոտում իր կողմից կազմակերպուող դիւերսիւնները:

-Ինքնանշանաբար, որ այդ դիւերսիւնները պատերազմի վերածուեն:

-Յուսով եմ՝ երբեք չեն վերածուի: Չնայած առկայ է նաեւ «պատահական» պատերազմի հնարաւորութիւնը, երբ փոքր շարժակունքներ կարող են վերածուել առաւել մեծ բախման, որոնք էլ չի բացառում դուրս գան վերահսկողութիւնից: Մի բան յստակ է՝ ազրեանը Ադրբեյջանն է, եւ տարածաշրջանին սպառնացող միակ վտանգը գալիս է Ադրբեյջանից: Ի տարբերութիւն Ադրբեյջանի, Հայաստանը ձգտում է խաղաղութեան եւ կայունութեան, եւ սա միջազգային հանրութիւնը շատ լաւ է հասկանում:

-Ձեր մատնանշած «պատահական» պատերազմի (Աստուած մի արասցէ) ընթացքում Վաշինգտոնի ու Մոսկուայի մօտեցումներն ինչպիսի՞նք կը լինեն՝ համագործակցային, թէ՛ մրցակցային:

-Երկու երկրներն էլ չեն ցանկանում, որ պատերազմը վերսկսուի: Բայց Ռուսաստանի համար այդ պատերազմով նոր հնարաւորութիւն կ'առաջանայ, եւ չի բացառում, որ վերջինս փորձի այդ ընթացքում ռուս խաղաղապահներ տեղակայել հակամարտութեան գոտում:

-Ինչպէ՞ս կ'արձագանքի դրան Ամերիկան:

-Անկեղծ ասած՝ Ռուսաստանը միշտ շատ մօտիկ է լինելու այս տարածաշրջանին, իսկ ԱՄՆ-ը հեռու է եւ միշտ է հեռու լինելու: Ընդ որում, եւ՝ Իրաքում, եւ՝ Աֆղանստանում Նահանգները չի փնտռում նոր ռազմական միջամտութիւն:

-Մնանք դեռեւս ռուս խաղաղապահների «մօտ»։ Իրանի քթի տակ Միացեալ Նահանգների համար որքանո՞վ է ձեռնտու ռուս խաղաղապահների ներկայութիւնը:

-Ռազմական առումով Իրանի հետ կապուած ռուս խաղաղապահները ոչինչ չեն կարող անել: Եւ Ռուսաստանի կողմից C-300 հրթիռների վաճառքն էլ Ադրբեյջանին հենց Իրանի խնդրի հետ է կապուած:

-Այսի՞նքն:
-Այսինքն՝ այդ հրթիռներն Իրանի հնարաւոր շարժակունքից Ադրբեյջանին պաշտպանելու համար են:

-Հետաքրքիր է: Դուք հաւանաւոր եք համարում Իսրայէլի (մասամբ էլ ԱՄՆ-ի) կողմից Իրանի ռմբակոծութիւնը:

-Իհարկէ: Նման իրական վտանգ իսկապէս կայ: Եւ որքան Իրանն աւելի է մօտենում միջուկային ռումբ ունենալու սահմանագծին, նոյնքան Իսրայէլը փորձում է ակտիւ գործողութեան վերածել իր սպառնալիքը:

-Իսկ հնարաւոր է, որ ԱՄՆ-ը համաձայնեց ու ձայն չի հանում թէ Յայաստանում ռազմաբազաների ժամկետի երկարացման, թէ Ադրբեյջանի C-300 հրթիռների վաճառքի առնչութեամբ, եւ թէ ընդհանրապէս՝ ԱՊՀ-ի առնչութեամբ, որովհետեւ ակնկալում է, որ Իրանի դէմ հնարաւոր յարձակման դէպքում Ռուսաստանը իրենց հետ կ'ապագործակցի, կամ գոնէ՝ չի մրցակցի:

-Իհարկէ:
-Իսկ հնարաւոր է, որ հենց Իրանն էր պատճառը, որ ԱՄՆ-ը որոշեց դուրս գալ Իրաքից, քով քովի բերել Իսրայէլն ու Պաղեստինը... Ասել է՝ թեթեւացնել մերձաւորարեւելեան իր խնդիրները, որպէսզի ձեռքերն ազատ լինեն Իրանի միջուկայինի դէմ:» կ'ուրեւիս:

-Դա կայ, սակայն այդ քայլերը պայմանաւորուած են նախ եւ առաջ այն քաղաքականութեամբ, որը Միացեալ Նահանգները վարում է ողջ Մերձաւոր Արեւելքում: Օբաման աւարտել է իր ներքին առաջնահերթութեան խնդիրները եւ հիմա գնում է դէպ արտաքին քաղաքականութիւն՝ փորձելով լուծել դրանք:

-Բժեղհանսկիւն վերջերս իր հարցազրոյցներից մէկում տեսակետ էր յայտնել, որ Օբամայի վրայ որոշակի առաքելութիւն կայ Մերձաւոր Արեւելքի հետ կապուած: Հնարաւոր է՝ ամերիկեան վարչակազմն Օբամայի համար թիւ մէկ խնդիր է համարել Իրանը:

-Ոչ: Իրանն առաջնահերթութիւն է Հիւսիսային Կորէայի եւ Պաղեստինի խնդիրներից յետոյ: Չմոռանանք Իրաքի ու Աֆղանստանի շատ մեծ կարեւորութիւնը կարծում է, որ Իրանի հետ կապուած դեռ ժամանակ ունի: Սակայն ողջ խնդիրն այն է, որ Իսրայէլը չտապեցնուի է:

-Ի՞նչ կ'ընկրտեւ ժամկետների համար է՞ շտապեցնուի «Իսրայէլը. ինչքան ժամանակ ունի ԱՄՆ-ը Իրանի խնդիրը» լուծելու համար:

-Պատուհանը մէկ, մաքսիմում՝ երկու տարի է:

-Ոնց երեւում է, եւ ինչպէս ընդունուած է ասել՝ «վերաբեռնում» է տեղի ունենում նաեւ Իսրայէլի շուրջ ԱՄՆ-Ռուսաստան փոխյարաբերութիւններում. Ռուսաստանը վերջերս ռազմական անախադէպ համաձայնագիր ստորագրեց Իսրայէլի հետ (իհարկէ՝ առայժմ շրջանակային):

-Այո: Այդ համաձայնութիւնը պայմանաւորուած էր նրանով, որ Իսրայէլը կորցրեց թուրքիան,

ՏՈՒՆԴԱՐԶ (ԽՈՌԵՐ ՕԴԱՆԱԻ ՄԵՋ)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

... Չգիտեմ թե ոմանք ինչպես են իրենց գգում օդանավում, այն էլ 12-13, ժամ, բայց ինձ համար այդ երեւոյթը կատարեալ տառապանք է:

Տառապանք՝ ոչ թէ վախի գագաման պատճառով, այլ պարտադրուած պարապուծեան: Շատ ուղեւորներ հիանալի են գգում իրենց. շատեր ընթերցում են, հեռուստացոյցի բազմաթիւ ալիքներով ընտանեկան, արկածային ֆիլմեր դիտում: Ոմանց էլ յաջողուած է չորս նստատեղ զբաղեցնել եւ թուիչքի ամբողջ ընթացքին փառաւորապէս քնել:

Իմ աթոռի յենակն աւրուած է (երեւի միակը ողջ օդանավի մէջ), եւ որքան էլ սեղմուած եմ կոճակը, միեւնոյնն է՝ յենակը ետ չի գնում: Այդպէս, ուղղահայեաց դիրքով երկար ժամեր հնարաւոր չէ նստած մնալ: Կանչում եմ ուղեկցողուհուն: Պարզուած է, որ նա գիտի այդ աթոռի փճացած լինելը եւ առանց խնդիր հանելու, ինձ տեղափոխում է մէկ ուրիշ նստատեղ:

Իմ առջեւ երիտասարդ ամուսիններ են՝ իրենց գոյգ փոքրիկ երեխաներով: «Ճաշ կերայ», - մտածում եմ ես: Եւ իսկապէս, ժամեր շարունակ զրկի երեխան լացը չի կտրում, ամբողջ սրահը լարուած վիճակում է, ուղեկցողները գնում-գալիս են, փորձում ինչ-որ ձեւով օգնել լուեցնելու փոքրիկին:

Աւելին, այստեղից-այնտեղից փնթփնթոցներ են լսուած, «լուեցրէք երեխային», «դեղ տուէք թող քնի»: Բաւական երկար ժամանակ անց, ինչ որ ուժի ազդեցութեան տակ փոքրիկը քնում է մինչեւ թուիչքի աւարտը:

Ես մտքերի հետ եմ: Ոչ խաչբառ լուծելն է օգնում, ոչ արկածային ֆիլմ դիտելը: Միտքս այնտեղ է՝ Երեւանում: Փորձում եմ կանգնեցնել ուղեղիս աշխատանքը:

- Հնարաւոր բան է. ուղեղը դադարում է աշխատելուց, երբ մարդը մեռնում է: Էդ անտէր ՌԻՂԵՂ կոչուածը քանի՞ ուղղութիւններով է աշխատում: Այդ օրը, օդանավի մէջ իմ ուղեղը թռնում էր ուր որ ասես..., ա՛յ հիմա էլ փոխեց իր աշխատանքի ուղղութիւնը, այս վայրկեանիս հարցնում է՝ ո՞վ է յօրինել «ինքնաթիռ» անուանումը: Ինչ որ մի իր, կամ զանգուած առանց որեւէ ուժի հրման, ի՞նչպէս կարող է ինքնիրեն

Թռչել:

- Ո՞ւր էինք, ուր գնացիր այ ուղեղ, ինչո՞ւ փոխեցիր ուղղութիւնդ, կենտրոնացիր մի հարցի վրայ, բա ես մեղք չե՞մ, ո՞ւր ես դէս ու դէն թռչում, անջատուիր, թող քնեմ, տես ինչպէս են բոլորը մրափում: Օդանավի լոյսերն էլ հանգցրել են, որ մարդիկ հանգստանան, իսկ դու անընդհատ, անդադրում աշխատում ես:

- Յիշո՞ւմ ես թէ ինչ էին ասում էն Չահէնները Հուլիսիկի ԿՈՉԻՐՈԿ անունով յիտուն տարուց աւելի գոյութիւն ունեցող բացօդեայ սրճարանում. «Չգնա՞նք մի քիչ տրժժանք...»:

- Մի բան հասկացա՞ր, տանջուած, չարչարուած իմ ուղեղ, - ի հարկէ ոչ: Ի՞նչ նկատի ունէին էդ՝ գուարճանա՞լ... Աստուած իրենց հետ, թող գնան ու «տրժժանք» որքան որ կ'ուզեն:

«Տըժժալ» եւ «Շփուել» բառերը զարդարում են երեւանեան այսօրուայ բառապաշարը: Մի նոր բառ էլ շրջանառութեան մէջ է մտել այս օրերին՝ ՈՐՈՇՆԵՐ, որ գալիս է պարսկահայերէնից: Այս բառը փոխարինում է (իբր թէ) ՈՄԱՆՔ, ՈՄԱՆՑ բառերին: Գիշեր-ցերեկ ազգային ՀՖ կայանով հեչում են, ասենք. «Որոշներ կօշիկ չունենալու պատճառով դպրոց չէին գնացել», կամ՝ «Որոշների կարծիքով գազի գները չեն բարձրանալու» եւ այլն, եւ այլն:

- Ուղեղ իմ բարի ու մաքուր, հիմա ո՞ւր ես տանում ինձ..., կանգնիր, կանգնիր, այո, այո, սա է Մաշտոցի Պողոտան, Չարենցի Տուն-Թանգարանի բակում գտնուող մեր տունը: Թումանեանի անկիւնից մինչեւ Պուշկինի անկիւնը ընկած հատուածում մեր կողմի մայթին երեք մուրացկան կանայք են...

- Ասա, բարեկամս, ուղեղ իմ պայծառ, քո յիշողութեան ծալքերում երբեք տեղաւորուե՞լ է նման մի դէպք, որ Երեւանի կենտրոնում, Մաշտոցի Պողոտայի վրայ մուրացկան լինի, այն էլ երեք կին...:

- Հիմա՞ ինչ յիշեցիր ուղեղ իմ...

- Մհեր Մկրտչեանի անուան թատրոնը, ուր ներկայ եղար անկրկնելի դերասանի 80-ամեակին նուիրուած երեկոյին: Կնոջը՝ Մարիետայի հետ միասին յուզմունքից թրջուած աչքերդ էիր անընդհատ չորացնում ողջ երեկոյի ընթացքում:

- Հիմա արի քեզ տանեմ

Երեւանի նոր գետնուղիներով, նոր բացուած ճանապարհներով: Գլխաւոր պողոտաների խաչմերուկներում տեղադրուած նոր, թուային լուսանշանների մօտ, ուր սփռուքից Հայաստան ժամանած զբօսաշրջիկներ, զարմանքից ապշած աչքերով սպասում են կանաչ լոյսին, որպէս փողոցն անցնեն՝ օպերային թատրոն գնալու համար:

- Կանգնիր, բարեկամ, գթայ տիրոջ սիրելիդ իմ ուղեղ, թոյլ տուր գէթ մէկ ժամ քնել: Չգիտե՞ս ինչ է. վերջին երկու-երեք օրերի ընթացքին որքան եկող-գնացող եղաւ եւ ես գրեթէ աչք չփակեցի: Դեռ աւելին, վերջին գիշերն էլ, մի կողմից հիւրերին էինք ճանապարհում, ճամպուկները կարգի բերում, միւս կողմից էլ դուրուկի կոնցերտիս տեսագրութիւնն էինք դիտում Գէորգ Դաբաղեանի հետ: Չէ՞ որ նա է Երեւանում կատարելու գալ տարուայ զարնանը: Կանգնիր էլի, ինչու՞ եմ, տուր բարեկամս, թող քնեմ...

Այ քեզ միամիտ մարդ, բա ես կարո՞ղ եմ կանգնել, ես միշտ եմ աշխատում: Երբ ես կանգ առնեմ՝ դու էլ կը վերջանաս: Քո քնած ժամանակ էլ եմ ես աշխատում, բա էն սիրուն-միրուն երագները ո՞վ է քեզ համար պատրաստում եւ քեզ մշտապէս ապրեցնում հայաստանեան յիշողութիւններով, ո՞վ է քեզ յիշեցնում քո թշուառ, սակայն այսօր քաղցր յիշուող մանկութիւնը, եւ ինչպէս ես դու ուզում, որ ես կանգնեցնեմ իմ՝ ի վերուստ տրուած աշխատանքը:

- Լաւ, լաւ մի նեղանայ, կարգադիր, ես պարտաւոր եմ մշտապէս հետեւել քո հրամաններին, ասա, հիմա ի՞նչ ես ուզում, որ ես մտաբերեմ:

- Օ՛հ, էնքան բան կայ յիշելու, վերապրելու, դու մշտապէս յույս դնելով ինձ վրայ, գլուխ ես գովում, թէ ամէն ինչ յիշում ես: Ո՞ւմ, ինչի շնորհիւ:

Իմ մի քանի տասնեակ, հարիւրաւոր ծալքերի շնորհիւ, իւրաքանչիւր վայրկեանում ես կարող եմ բազմաթիւ ուղղութիւններով քեզ մտածել, յիշել տալ դէպքեր, մարդկանց, որոնց հետ առնչուել ես: Ես քեզ կարող եմ տանել աշխարհի մի ծայրից միւսը եւ քեզ միտքով անհամար երեւոյթների մէջ, այդ ես եմ յիշում ամէն ինչ ու քեզ թելադրում ինչ անել եւ ինչի վրայ կենտրոնանալ:

- Հիմա ասա տեսնեմ, ի՞նչ կ'ուզէիր յիշել: Ո՞ւր տանեմ քեզ, Երեւան, թէ Լոս Անճելըս:

- Ուր էլ տանելու լինես իմ ուղեղ, իմ բոլոր նուիրագործումների կառավարիչ, միեւնոյնն է,

ինձ չես կարող կտրել հայրենիքից: Ուր էլ լինելու լինեմ, ինչ էլ մտածեմ, ինչ էլ ասեմ ու անեմ, միեւնոյնն է իմ հուլիսն իմաստաւորուած է Հայրենիք հասկացողութեամբ, այսօր Չանայ ինձ պահել Երեւանի գրկում:

- Լաւ, թող այդպէս լինի, թէեւ ինձ համար դժուար է կենտրոնանալ միեւնոյն թեմայի վրայ: Բնութիւնն ինձ օժտել է անընդհատ շարժուելու, այս ու այնտեղ թռչելու բացառիկ ունակութեամբ: Ասա ինչու՞ եմ, ինչո՞ւ էիր այդքան զայրացել այն պետական պաշտօնեայ կնոջ վրայ, ձեր Երեւան ժամանելու առաջին իսկ օրը, բակի ամբողջ տարածքին քո ձայնն էր լսում:

- Լսիր բարեկամս, այդ կինը, կամ, ինչպէս ասում են, օրիորդախառն տիկինը թաղային խորհուրդ են ասում, ինչ են ասում չգիտեմ, այդտեղից էր եկել, եկել էր դրամ գանձելու: Իբրեւ թէ ես վերջին վեց տարիների ընթացքում իմ բնակարանի հետ կապուած պետական տուրքերը չեմ վճարել: Ասում, բացատրում եմ, որ վճարել եմ եւ երբեք պարտք չեմ մնացել պետութեանը:

- Մեր համակարգչի մէջ չի նշուած թէ դուք վճարել էք, բայց մի բան կ'անենք, - հասկացնել ուզելով, որ ընդհանուր լեզու կը գտնենք, ինչպէս ասում են՝ ետլայ կը գնանք:

- Մասետրօ, անդորրագրերը ձեր գրասեղանի դարակում են, ասում է հարեւանուհիս, որ ասա քանի տարի հոգ է տանում իմ բնակարանի բոլոր վճարումները ճշգրիտ, ժամանակին մուծելու համար:

Եւ իսկապէս, Նունէն յարակից սենեակից բերում է բոլոր տարիների կենցաղային սպասարկութեան եւ պետական տարբեր հիմնարկներին վերաբերող վճարումների ողջ փաթեթը, որի շնորհիւ պարզ է դառնում, որ ես պետութեանը պարտք չեմ:

Պաշտօնեայ կինը ապշած է.

- Սա էլ քանիերորդ դէպքն է: Պարոն Անասեան, իրօք դուք եւ շատ ուրիշներ պարտաճանաչօրէն կատարել էք ձեր քաղաքացիական պարտքը, բայց հաս նախորդ պաշտօնեայ կինը մեր հիմնարկի համակարգչի մէջ չի անցկացրել վճարումները ու ըստ այնմ էլ պետական գանձարան չեն մտել դրանք: Բարեբախտաբար դուք պահել էք անդորրագրերը ու ձեզ մնում է վճարումներ անել միայն այս տարուայ համար:

Շաք.բ էջ 18

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---



A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրածնոս է


Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

Everyday Low Prices!


	GREY GOOSE VODKA ALL FLAVORS 21⁹⁹		ESPOLON TEQUILA SILVER OR REPOSADO 19⁹⁹		JACK DANIEELS OLD NO. 7 WHISKEY 13⁹⁹		PATRON SILVER TEQUILA 29⁹⁹
	CHIVAS REGAL 12 YEARS SCOTCH WHISKY 16⁹⁹		DEWAR'S 12 YEARS SCOTCH WHISKY 14⁹⁹		HENNESSY VS COGNAC 21⁹⁹		JOSE CUERVO ESPECIAL TEQUILA 9⁹⁹
	CAZADORES REPOSADO TEQUILA 19⁹⁹		COURVOISIER VS COGNAC 16⁹⁹		JOHNNIE WALKER BLACK LABEL 19⁹⁹		RUSSIAN STANDARD PLATINUM VODKA 18⁹⁹
	TITO'S HANDMADE VODKA 17⁹⁹		DON JULIO 1942 TEQUILA 7⁹⁹		CROWN ROYAL CANADIAN WHISKY 13⁹⁹		CAPTAIN MORGAN SPICED RUM 10⁹⁹
	CORZO SILVER TEQUILA 29⁹⁹		BAILEYS IRISH CREAM 13⁹⁹		THREE OLIVES VODKA 1.75L 19⁹⁹		ARARAT NAIRI 20 YR ARMENIAN BRANDY 54⁹⁹



1785 E. Washington Blvd.
(corner of Allen)
Pasadena, CA 91104
(626) 794-7026



825 W. Glenoaks Blvd.
(corner of Highland)
Glendale, CA 91202
(818) 242-0683



Hours: Mon. - Sat., 9am - 8pm
Closed Sunday

Hours: Mon. - Sat., 9am - 8pm
Closed Sunday

Southern California's Premier Wine & Spirits Superstore!

*This ad expires on 09/29/10 • We reserve the right to limit quantities • No CCs • Sales tax excluded • Prices subject to change without notice.
• Ad prices may remain in effect longer than the time period indicated • All items are 750ml in size unless specified.

ԲԱՑՈՒՄ ՊՈԼՍԱՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԿԵԴՐՈՆԻՆ



Կիրակի, 12 Սեպտեմբերի 2010ին, կեսօրէ ետք ժամը 2:30ին պատմական յետ-միջօրէ մը ապրեցաւ մեր գաղութի Պոլսահայ Միութիւնը: Արդարեւ Ուինչէթքա քաղաքի Շրմըն Ուէյ պողոտայի վրայ հասակ առած Միութեան նոր կեդրոնի բացումն էր: Տօնական ուրախ միջոցառում: Կը ժամանէ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ հայրապետը իր շքախումբով: Բուն ծափահարութիւններով եւ մատուցուած աւանդական աղ ու հացով դիմաւորուելէ ետք կը բարձրանայ շէնքի հանդիսութեանց դահլիճը: Այստեղ Պոլսահայ Միութեան անունով բարի գալուստի ջերմ խօսքերով Վեհափառին ողջունէ ստենապետ Սիմոն Աճըրիաճօղլուն: Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան ելոյթ

Պատերազմի առաջին օրերին Աւետիք Իսահակեանը, Դերենիկ Դեմիրճեանը, Մարտիրոս Սարեանը եւ մշակոյթի ականաւոր միւս գործիչները կոչերով ու նամակներով դիմեցին սփիւռքահայութեանը, պաշտպան կանգնել վտանգի ենթարկուած հայրենիքին: Միեւնոյն ժամանակ 1941թ Յունիսին էջմի-



Լիբանանու մտորայի շրջանից Հայ գաղթական բանվորների խումբը, (standart oil co.) ամերիկյան ընկերութեանը մ: 1925թ. նախաձեռնել են հիմնել «բարեսիրական միութեան» անդամավճար, ամիսը 25լ.դ., որը օգտագործվելու է անմիջական կարիք ունեցող բանվորին: Աջից նստողը՝ միութեան ատենապետ՝ Արքաեամ Գյուրճյան

Սիրիայում, 1909թ-ի Ատանայի կոտորածներից յետոյ, զանգուռածային գաղթը վերստին տեղի է ունեցել Մեծ Եղեռնից, ինչ որ Սիրիահայութեան թիւը եղել է 142 հազար, որից 60 հազարը Հալէպի շրջակայքում:

Լիբանանում. Լիբանանը ֆրանսական իշխանութեանը ենթարկուելուց յետոյ, Եղեռնից եւ Կիլիկիայի կոտորածներից տասնեակ հազարաւոր հայեր ապաստան են գտել Լիբանանում հիմնելով մի նոր Գաղութ: 1923-1924թթ.-ին, Լիբանանում բնակուել են շուրջ 35-40 հազար հայ գաղթականներ եւ որբեր:

Լիբանանյան գաղութի կազմաւորման մասին Ժիրայր Դանիէլեանը ասում է.

«Յարգ տիրող կարծիքը այն եղել է, որ լիբանանահայ նորագոյն գաղութը կազմաւորման հետ, որպէս հետեւանք Մեծ Եղեռնից եւ Կիլիկիայից վերջին պարպումից, ծնունդ է առել նաեւ լիբանանահայ մամուլը (Ժիրայր Դանիէլեանը Բանասիրական որոնումները, Պէյրութ, 1996, էջ74)»

Իրաքում ին Տիյա գետի ափին 17 հազար հայ գաղթականների համար կանգնեցուել է 3 հազար վրան: Յետագայում նրանց մեծ մասը փոխադրուել է Պաղատա:

1920-ական թուականների սկզբին իրաքում ապաստանած գաղթականների թիւը հասել է 30 հազարի:

Եգիպտոս, հայերի հոսքը դէպի Եգիպտոս առանձնապէս ստուարանում է Հայոց ցեղասպանութեան տարիներին, այդ ժամանակ Եգիպ-

Ֆրանսա, 1920-ական թթ. Երբ մեծ եղեռնից փրկուած արեւմտահայ Գաղթականների հազարաւոր ընտանիքներ եւ որբեր հաստատուել են Ֆրանսայում: 1920-ական թթ. Սկզբին ֆրանսայում բնակուել է շուրջ 50-60 հազար հայ:

Յունաստան, 1909թ. Ատանայի Հայկական Կոտորածներից, 1915թ. Մեծ Եղեռնից եւ հայկական Զմիւռնայի ջարդերից յետոյ, Յունաստան գաղթել են 70 հազար հայ գաղթականներ: 1923թ. Յունաստանում հայ գաղթականների թիւը հասել է 120 հազարի (որից 20 հազարը որբեր):

Ռումինիա, Ռումինահայ գաղութը կրկին համալրուել է 1894-1896 թթ. Համիտեան ջարդերից, 1909թ.-ի Ատանայի կոտորածների եւ 1915-ին Մեծ Եղեռնի հետեւանքով: Հայերի վերջին խոշոր գաղթը Ռումինիա տեղի է ունեցել 1922թ-ին, երբ Քեմալական զորքերը կոտորել են Զմիւռնայի Քրիստոնեայ բնակիչներին, Ռումինիայում 1940թ հայերի թիւը կազմել է 25 հազար:

ԱՄՆ, Ատանայի կոտորածը 1909թ-ին պալքանեան պատերազմները (1912-1913թթ.) մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը, ԱՄՆ-ում բնակուել են 50 հազար հայ: 1915թ-ին Հայերի ցեղասպանութեան եւ կոտորածների հերթական գաղթական հոսքը ԱՄՆ-ում 1919-1920թթ հայերի թիւը հասել է 75 հազարի: 1924 թ ԱՄՆ-ում բնակուող հայերի թիւը հասել է աւելի քան 120 հազարի:

Արժենթինա, 1914թ բնակուել են 2000 հայ: 1920-1930-ական թթ. Կիլիկիայից եւ Իգմիրից



Հայրենադարձներու Ա. Կարավանի Մեկնումը Եգիպտոսեն Ադիսաբեդրիա, 3 Սեպտեմբեր 1947

փրկուող հայոց սփիւռքի կազմաւորման ժամանակաշրջանի հետ, այլ նաեւ հանդիսանում էր սփիւռքահայութեան ապահովութեան երաշխիքը եւ նրա գիտակցութեան աստիճանական զարգացման մղիչ ուժը հայրենիքի հասկացողութեան եւ հայրենասիրութեան արտայայտման ձեւերին եւ եղանակներին:

Հայրենադարձ սփիւռքահայ աշխատաւորները անվերապահօրէն կանգնեցին խորհրդային Հայաստանի պաշտպանութեան դիրքում, ցանկութիւն յայտնեցին ներգաղթել ազատագրուած հայրենիք:

Սովետական Հայաստանի եւ նոր ստեղծուած սփիւռքի փոխյարաբերութեան ամրապնդման սկզբնական շրջանի խնդիրների յաջող լուծման գործնական արտայայտութիւնը հանդիսացաւ 1920-ական թուականներին կազմակերպ-

ածինը յստակ ուղերձ չղեց սփիւռքահայութեանը:

Ամբողջ սփիւռքը Հայրենասիրական ոգեւորութեամբ Սովետական ժողովրդի հետ բաժանում էր 1941-1942 թուականների պատերազմական դառնութիւնները: Սփիւռքահայութիւնը անմիջապէս նախաձեռնեց հայրենիքին գործող օգնութիւն ցոյց տալու աշխատանքին:

Մեծ հայրենասէր, Ամենայն Հայոց Հայրապետութեան Տեղապահ Գէորգ Չորէքճեանը 1943 թուականի Յունուարին նախաձեռնեց «Սասունցի Դաւիթ» տանկային շարասիւն ստեղծելու համար համագոյցին անհանգստութեան կազմակերպումը:

Այո, պատմական ճշմարտութիւն է, ի պատասխան հայրենիքի

ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԹԵՅՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Առաջին անգամ «Աղա Մա-
համադ-Խան Ղաջար»-ը Թեհրան-
նը կարգեց իր մայրաքաղաքը:
Նրանից յետոյ «Ֆաթհալի Շահ»-ի
ժամանակ, այս նորոգ մայրաքա-
ղաքը մեծ յառաջդիմութիւն չու-
նեցաւ: 1806ին ունէր միայն 30,000
բնակիչ: Այս քաղաքը իր իրական
ածուցը ստացաւ «Նասրէդդին
Շահ»-ի օրօք՝ 1848ից յետոյ:

Քաղաքի հիւսիսային կողմում
է գտնուում «Արք» կոչուած դղեակը
որ Շահի պալատն էր, հին քաղա-
քամասն ունի նեղ եւ ծուռ փողոց-
ներ, բայց նոր թաղամասերում
փողոցները լայն են եւ ուղիղ տրա-
մագծի վրայ, իսկ տները աւելի
ճաշակով սարքուած:

Այսպիսով Թեհրանը համար-
ւում էր Պարսկաստանի գեղեցիկ
քաղաքներից մէկը եւ 18րդ դարի
վերջերին ունէր մօտ 150,000 բնա-
կիչ: 1975ի մարդահամարին ունե-
ցել է 4-5 միլիոն ժողովուրդ, իսկ
այժմ ըստ 1984ի իսլամ կառավա-
րութեան գրառումին՝ ունի 10
միլիոն բնակիչ: Ժողովուրդի մեծ
մասը պարսիկներ են, բայց կան
նաեւ հրեայ, թուրք, հայ, ասորի,
հնդիկ, աֆղան եւ քիչ թւով էլ
եւրոպացի եւ ճապոնացի բնակիչ-
ներ:

Թեհրանի հիւսիսային կող-
մում են գտնուում «Շէմիրանաթ»
կոչուած ծառաւէտ ու ջրառատ
գիւղերը, որոնք համարւում են
Թեհրանի բնակիչների ամառանո-
ցը:

Հայերի Թեհրանում հաստատ-
ուելը սկսուել է 18րդ դարի վեր-
ջերից՝ «Քարիմ խան Ջանդ»-ի
օրօք, որ Նոր Ջուղայից 10 տուն
հայ քարտաշներ բերել տուեց եւ
բնակեցրեց Թեհրանի «Դուլաբ»
կոչուած արուարձանի կամ գիւղի
մէջ: (Հայերի «Դուլաբ»-ում ունե-
ցած այժմեան գերեզմանատունն էլ
այն օրերից մնացած մի հայկական
կալուած է): Իսկ նախքան այդ,
«Աղա Մահամադ-Խան»-ը 1795ին
Ղարաբաղի նահանգից մօտ 5 տուն
հայ էր բերել եւ բնակեցրել Թեհ-
րանի այն օրերի «Դարվազ Ղազ-
ուլին» կոչուած արուարձանում: Ապա
1798ին, «Ֆաթհալի Շահ»-ի ժամա-
նակ, երկրի գանազան կողմերից
հայեր սկսեցին գալ եւ հիմնուել
Թեհրանի մէջ, իսկ թագաւորի
հրամանով յատկապէս Նոր Ջուղա-
յից եւ Թաւրիզից հայ արհեստա-
ւորներ եկան եւ բնակուեցին մայ-
րաքաղաքում: Այն օրերին հայերի
մեծ մասը բնակուում էր Թեհրանի
հարաւային թաղամասի «Դարուզ
Ղազուլին» կոչուած արուարձանում
որ մինչեւ այժմ էլ այդ թաղամասի
փողոցներից մէկը կոչուում է «Խիա-
բանը Արամընէ» (Հայոց պողոտայ),
որտեղ գտնուում է Ս. Գէորգ Եկեղե-
ցին, որ ըստ ոմանց, կառուցուել է
1805 թուին (200 տարուայ հնու-
թիւն) եւ մինչեւ օրս էլ համարւում
է հայերի ուխտատեղին, մանաւանդ
Ս. Գէորգի տօնին՝ երբ ուխտագնաց-
ները գիշերելով եկեղեցու բակում,
վաղ առաւօտեան մատաղ են մատու-
ցանում եւ ապաշխարում:

Թեհրանին կից «Շահ-Աբդուլ
Ազիմ» կոչուած թաղամասի մէջ է
գտնուում Ս. Բարդուղիմէոս անու-
նով մի մատուռ (200 տարուայ
հնութիւն) որի գաւթի մէջ թաղ-
ուած է վրաստանի թագաժառանգ
Աղեքսանդրը, եւ այլ մի շարք
օտարազի ականաւոր դէմքեր: Բայց
այլեւս որեւիցէ հայ այս օրերում չի

ապրում վերոյիշեալ թաղամասե-
րում:

Դեռեւս 1870ական թուական-
ներից, Թեհրանի հայ համայնքն
ունէր իր ազգային դպրոցն ու
հանրային-մշակութային կազմա-
կերպութիւնները: Նոյն թուակա-
նին է, որ հիմնուում է «Ուսումնա-
սիրաց Ընկերութիւն»-ը, նախա-
ձեռնութեամբ երեք ազգայինների՝
Աղա Միքայէլ Մարգարեանի, Յով-
սէփ Գասպարեանի եւ Կարապետ
(Շաուլ) Բաղիրզանեանի:

«Ուսումնասիրաց»-ը բաց է
անում հայկական դպրոց՝ «Հայ-
կագեան» անունով, հաջաւտ «Դար-
ուզ Ղազուլին» թաղում: Հաստատ-
ւում է տարեկան տուրք՝ այդ
ընկերութեան անդամների վրայ,
ըստ կարողութեան, եւ ուսումը
դարձնում ձրի, այսպիսով ապա-
հովուում է դպրոցի գոյութիւնը: Սա
առաջին արդիական դպրոցն էր, որ
բաց էին անում հայերը Թեհրա-
նում:

«Հայկագեան» դպրոցն իր
ձրիավարժ սաներով շարունակում
է իր լոյս սփռող գործունէութիւնը:

1890ական թուականներին, ու-
նենալով որակեալ ուսուցչական
կազմ, բաղկացած մեծ մասամբ
պարսկահայերից եւ թուրքահայե-
րից՝ Յ. Գասպարեան, Նազար Էֆէն-
դի Գորոյեան, Աբր. Աւետիսեան,
Ալ. Գորոյեան, Գէորգ Չոհրապեան
եւ Աբ. Սարգսեան, աւանդում էին
մի քանի լեզուներ եւ հաջգիտա-
կան առարկաներ, տարեկան ջրի
քննութիւններին ներկայ էին լի-
նում պետական դէմքեր եւ օտար
դեսպաններ:

1871 թուին «Նասէրէդդին
Շահ»-ը թողակ է կապում դպրոցին՝
տարեկան 200 թուման, որ այնու-
հետեւ շարունակուում է տասնամ-
եակներ:

1873-1874 թուերին, Յ. Գաս-
պարեանի ջանքերով, հիմնուում է
գրադարան, մի քանի հարիւր կտոր
գրքերով:

1871 թուին, օրինակ վերցնե-
լով «Ուսումնասիրաց» ընկերու-
թիւնից, Թեհրանում հիմնուում է
«Հայուհեաց Ընկերութիւն»-ը որ
նոյն թուին «Վանագ» գիւղում
բաց է անում օրիորդաց դպրոց,
սակայն մէկ տարուայ կեանք է
ունենում եւ որոշ դժուարութիւն-
ների պատճառով փակուում եւ ըն-
կերութիւնն էլ կազմալուծուում է:

1881 թուին, վերակազմւում է
«Հայուհեաց» ընկերութիւնը, եւ
Թեհրանում բաց է անում օրիորդաց
առաջին դպրոցը ուր դասաւան-
դում էին Ս. Մ. Փափագեանի աղջիկ-
ները: Երկու տարի յետոյ, այս
դպրոցը եւս փակուում է՝ վարժուհի
չունենալու պատճառով, որովհետեւ
այդ մարդիկ չէին կարող պաշտօնա-
վարել օրիորդաց դպրոցում:

1880ից մինչեւ 1890ական թուա-
կանները, հայ գաղութը տարած-
ւում է նաեւ Թեհրանի «Դարուզ
Դուլաթ»-ի թաղում, արդէն 90ական
թուականներին խորհում են այդ
թաղում եւս եկեղեցի ունենալ:

1900 թուին չնայած հանգա-
նակութեան, չի յաջողում բաւա-
կանաչափ դրամ ունենալ՝ եկեղեցի
կառուցելու համար, ուստի եւ այդ
թաղի գաղութը, որոշում է եկեղե-
ցու համար գնուած հողի վրայ
դպրոց հիմնել:

1903 թուին, թերաւարտ շէն-
քում բացւում է դպրոց, որ համար-
ւում է «Դարուզ Ղազուլին»-ի դպրո-

«ՅԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱԳԱՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»



Ս. Էջմիածնի Աւագ Սեդանի ներքեւում գտնուող հեթանոսական կրակարան

ՀԱՐՄԻԿ ՅԱԿՈՐԵԱՆ

Երբ մենք 301 թուականին
ընդունում ենք Քրիստոնէութիւնը
որպէս պաշտօնական կրօն, ըստ
աւանդութեան կործանում ենք
բոլոր գոյութիւն ունեցած
մեհեանները եւ տեղը կառուցում
ենք հայկական եկեղեցիներ եւ
վանքեր, ամէնալաւ օրինակն է
Սուրբ Էջմիածնի մայր տաճարի
աւագ Սեդանի տակ գտնուող
հեթանոսական կրակարանը:
Յանկալի է երբ գնում ենք
Հայաստան եւ այցելում էջմիածնի
Մայր տաճարը, ստանալով յատուկ
թոյլտուութիւն այցելել այդ
հնութիւնը: Ի հարկէ սա միակ
կրակարանը չէ բայց ամէնից լաւ է
պահպանուած: Այստեղ պիտի յիշել
որ մենք քանդել ենք բոլոր
հեթանոսական տաճարները, ուրեմն

ցի մասնաճիւղ, եւ վերջինիս ու-
սուցիչներն ստիպուած էին ահա-
զին ճամբայ կտրելով, գալ պարա-
պել նաեւ «Դարուզ Դուլաթ»-ի
դպրոցում:

Յետագայում, Ս. Մարիամ
Աստուածածին եկեղեցին կառուց-
ւում է այժմեան «Ղաւամ-Սալթա-
նէ» պողոտայում, հանրածանօթ բա-
րերար եւ Իրանահայ վաճառական
Ռոման Խայեանի նիւթական օժան-
դակութեամբ՝ իր մօր յիշատակին:

Իսկ 1954ին Մարգար Սարգս-
եանի նուիրատուութեամբ ի յիշա-
տակ իր վաղամեռիկ դստեր՝ Մար-
իամի, Թեհրանում կառուցուեց
«Մարիամեան» օրիորդաց Միջ-
նակարգ դպրոցը:

Գուրգէն եւ Վազգէն Սարգս-
եանների նուիրատուութեամբ, «Քա-
րիմ-Խան Ջանդ» պողոտայում կա-
ռուցուեց Թեհրանի Ս. Սարգիս հո-
յակապ եկեղեցին, ի յիշատակ իրենց

չունենք որեւիցէ կենդանի նմուշ
նախաքրիստոնէական կրօնական
կառուցներ, բայց կարելի է գալ
հետեւեալ եզրակացութեան, քանի
որ բնական օրէնք է որ որեւիցէ
ճարտարապետական ոճ մի անգամից
մէջտեղ չի գալիս, այլ ժամանակ է
պէտք որ կամաց կամաց աճի եւ
յղկուի:

Ուրեմն մենք կարող ենք
յանգել հետեւեալ եզրակացութեան,
որ բացի յունական եւ հռոմէական
ճարտարապետական ազդեցութե-
ւանից մեր նախա-քրիստոնէական
կառուցները շատ տարբեր չեն եղել
մեր այսօրուայ եկեղեցիների
ճարտարապետական ոճից, յատկա-
պէս որ նկատի ունենանք այն
հանգամանքը որ մեր ներկայիս
եկեղեցիների ճարտարապետական
ոճը դարերի ընթացքում շատ մեծ
փոփոխութիւն չի կրել:

հանգուցեալ հօր, եւ եկեղեցուն կից
կառուցուեց Առաջնորդարանի շէն-
քը՝ ի յիշատակ իրենց հանգուցեալ
մօր Խանում Սարգսեանի:

Թեհրանի մերձակայքում
գտնուող 4 հայաբնակ գիւղերի մէջ
գլխաւորը «Վանագ»-ն է, որ գտնուում
է Թեհրանի հիւսիսային մասում եւ
ունի Ս. Մինաս եկեղեցին եւ մի
դպրոց:

Մնացած երեք գիւղերն էլ
կոչուում են «Խորդուս», «Դարուս»
եւ «Բումէյլին», որ ամէն մէկի մէջ
ապրում են միայն մի քանի հայ
ընտանիքներ:

1896ին, «Նասրէդդին Շահ»-ի
սպանուելուց յետոյ, գահ բարձրացաւ
«Մոզաֆերդդին Շահ»-ը: Այս
թագաւորը գլխաւոր մարդ էր եւ
սրա օրօք հայերն էլ պարսիկների
պէս ունէին հանգիստ կեանք ու
անդորրութիւն՝ առանց որեւցէ
խտրութեան:

ՀԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐՈՎ ՈՐՏԵՂ Ե ԱԲՈՎԵԱՆԻ ԳԵՐԵՉՄԱՆԸ

ՅՈՒՎԻԿ ՉԱՐԻՉԵԱՆ

1848 թ. Աբովյանը դուրս եկավ իր տնից ու այլևս չվերադարձավ: Աբովյան քան մեկ ու կէս դար է անցել, բայց մինչ օրս էլ մեծ գրողի ու լուսավորչի անյայտ բացակայության առեղծոածային պատմությունը հանգիստ չի տալիս հետազոտողներին: Այս ընթացքում շրջանառու են բազմազան վարկածներ ու կարծիքներ, քննություն են դրուել հաւանական ու անհաւանական տեսակետներ, հրապարակուել են ծաւալուն աշխատություններ: Սակայն, այդ ամենով հանդերձ, գաղտնիքը շարունակում է մնալ գաղտնիք, իսկ իւրաքանչիւր նոր մօտեցում էլ աւելի է խճճում առանց այդ էլ կնճռոտ պատմությունը:

Անհետացման հաւանական պատճառների ու ենթադրությունների ցանկն ի սկզբանէ ընդարձած էր: Դրան նպաստել էին երկու կարեւոր հանգամանք: Մի կողմից դէպքի առթիւ ոստիկանությունների արդիւնքներն էին, որոնց կցկտուր լինելը արդէն իսկ գանազան կասկածներ էր չարուցում, միւս կողմից ամենատարբեր ասեկոսների առիթ էին տալիս ոմանց հետ Աբովյանի անձնական ու ծառայողական բարդ յարաբերությունները, որոնք գրողի անհետացումից յետոյ ներկայանում էին միանգամայն այլ երանգներով ու ենթատեքստով:

Երեւանում լուրեր էին տարածուում այն մասին, թէ գրողը խեղդուել է Ջանգու գետում, եւ գետի ափին գտել են նրա ոտնամանը: Ուրիշները պնդում էին, թէ պատահա մեղաւորներ կարող են լինել էջմիածնի կղերականները, որոնք հալածում էին Աբովյանին այն բանի համար, որ վերջինս հերքել էր Արարատի գագաթին Նոյան տապանի գոյությունը փաստը: Ոմանք էլ հակուած էին մտածելու, թէ Աբովյանը կարող էր սպանուել մի քանի թուրքերի ձեռքով, որոնք իբր ժամանակին պարտք էին վերցրել գրողից եւ որոշել էին չվերադարձնել գումարը:

Աւելի ուշ շրջանառությունները դրուեց նաեւ ինքնասպանության թէպէ, ինչը եւս որեւէ կերպ չէր հիմնավորուած: Ասենք, որոշ կենսագիրներ ու պատմաբաններ էլ աւելի հեռուն գնացին: Մի դէպքում Աբովյանը յայտնուում էր կողկասի լեռնականների առաջնորդ Շամիրի մօտ, մէկ այլ տարբերակում նա մեկնել էր գինուորագրուելու Եւրոպական լեղափոխությունները, իսկ յետոյ եղան նաեւ պնդումներ, թէ «վէրք Հայաստանի»ի հեղինակը հասել է մինչեւ... Բրազիլիա: Սակայն պէտք է ասել, որ այս շարքում առաւել հետաքրքրական էին շշուկներն այն մասին, թէ Աբովյանին «սեւ կառէթով» տարել են Սիբիր: Կարող էր այս վարկածն իրական լինել: Կա՞ն այնպիսի փաստեր, որոնք թույլ են տալիս փոքր-ինչ այլ կերպ գնահատել ու դիտարկել Աբովյանին աքսորելու հնարաւորությունը:

Այս առումով Հայաստանի ազգային արխիւի թղթապանակներում պահպանուած մի վաւերագիր (ՀԱԱ, Ֆ. 122, ց. 1, գ. 236, էջ 74-76) բաւականին ուշագրաւ եւ անպատեւելի տեղեկութիւններ է պարունակում՝ իր հաւաստիութեամբ

ստիպելով առանձնակի վերաբերմունք դրսեւորել այնտեղ շարադրուածի հանդէպ: Խօսքը 1926 թուի գարնանը Մայր Աթոռի միաբան Ռուբէն Ծ. Վարդ. Մանասանի կողմից Հայաստանի Լուսժողովում Ասքանազ Մուսեանին յղուած նամակի մասին է: Ձեր ուշադրութեանն ենք ներկայացնում այդ նամակն ամբողջութեամբ:

«Հայաստանի Խ. Ա. Հանրապետութեան Լուսժողովում մեծարգոյ Ա. Մուսեանին

Անցեալ 1925 թուին իմ Հեռու Արեւելիում նախապիտոյութեան միջոցիւ, Խարքիում տեղական հայ գաղութի անդամներին Սարգիս Գրգիւսեանը պատմեց, որ իր մօտ է եղել Խաչատուր Արովյանի գերեզմանի մկարը, որը պահելիս է եղել մեծ գուրգուրանքով, սակայն այդ մկարը այրուել է 1917 թուին իր տանը պատահած հրդեհի ժամանակ, իր գրադարանի եւ մի շարք մկարների հետ:

Պատմեց, թէ ինչպէս է այդ մկարը բնկել իր ձեռքը: Սարգիս Գրգիւսեանի՝ դեռ Վլադիմիր Կուրյուկովի հետ ժամանակ գալիս է իր մօտ մի անձնագր մարդ եւ յայտնում, թէ իմիւր Կուրյուկովի խմբից է, Սախալին արտոնուած, անուր Մերուց, որ գիտէ լուսնկարի: Երբ դեռ իմիւր Սախալինում է լինում, գալիս է Սախալին Խարաբովսկի քաղաքի Մարգարիտովի Էփուկիցիան 1906-07 թուին եւ այդ խմբի հետ իմիւր էլ գնում է Օխոտսկ որպէս լուսանկարիչ, որտեղ եւ լուսանկարում է մի շարք տեսարաններ:

Օխոտսկում արտոնուած ծերունի ուսուցիչի հետ խոսակցելով այդ լուսանկարչի հայ լինելը, ցոյց է տալիս մի գերեզման ասելով. «Ահա այստեղ է թաղուած հայ Խաչատուր Արովյանը, որ արտոնուած էր այստեղ»:

Լուսանկարիչը մկարում է այդ գերեզմանը, որը Սարգիս Գրգիւսեանի պատմելով մերկայացնում է մի չարդախ (չորս սիւն տնկած, վրան ծածկած տախտակով), որի տակ կար մի գերեզման:

Լուսանկարիչ Մերուցը Օխոտսկից վերադառնալիս Էփուկիցիայի գլխաւոր Մարգարիտովի երաշխաւորութեամբ ազատում է Սախալինից եւ ժամանակաւորապէս ապրում Խարաբովսկում, որտեղ եւ գրադուելիս է եղել լուսանկարչութեամբ: Սակայն ցարական կառավարութիւնը նորից հետ պակտում է նրան բանտարկելու, որի պատճառով փախչում է Խարաբովսկից եւ գալիս է Վլադիմիր Կուրյուկովի մօտ, որտեղից էլ մի քանիսի օգնութեամբ փախչում է Ֆուգում եւ Սիմգապուր:

Վլադիմիր Կուրյուկովից հետեւալիս մի շարք իր լուսանկարներից նուիրում է Սարգիս Գրգիւսեանին, որոնց հետ եւ յանձնում է ի պահ Խաչատուր Արովյանի գերեզմանի մկարը:

Ի մկատի ունենալով մի հանգամանք, որ Կուրյուկովի արշաւախմբի անդամներից ամենակրթուածը եւ իմտելիզներն անհատներին մէկն է եղել վերոյիշեալ լուսանկարիչ Մերուցը, որ անշուշտ ֆինադատական աչքով եւ լրջութեամբ է վերաբերուել այս խնդրին եւ լուսանկարելով մեր մեծ հայրենասէրի գերեզմանի մկարը, որ անյայտութեան մէջ է եղել մինչեւ այսօր, ցանկացել է հրապարակ բերել նրա ուր լինելը, սակայն իր

դուրսիւր կասկածելի լինելով չի կարողացել իր մտադրութիւնը իրագործել եւ վախճանալով, թէ կարող է իր փախուստի ժամանակ մկարը կորցնել, յանձնել է ի պահ Սարգիս Գրգիւսեանին, որ պահելիս է եղել ամենայն խնամքով:

Սարգիս Գրգիւսեանը որպէս խելացի եւ լուրջ մարդ միշտ հետաքրքրուել է հասարակական եւ հայկական կեանքով եւ պարբերական մամուլի միջոցով մօտիկ ծանօթ է հայկական կեանքի անցողարձի հետ, ցաւելով է պատմում, որ իրեն մեծ վիշտ է պատճառել ոչ այնքան իր միութեան խոշոր վնասը, որքան Խաչատուր Արովյանի գերեզմանի մկարի կրակի մարակ դառնալը:

Այս մասին յայտնելով ձեզ, յարգելի կոմիսար, ցանկալի է խորհրդային Միութեան հաստատութիւնների միջոցով ստուգել Խաչատուր Արովյանի անյայտանալու տարբերուի արխիւներին:

Իմ նախապիտոյութեան միջոցիւ Սիբիրում հանդիպեցի շատ ու շատ հայ արտականների, որոնց հետ խօսելուց երեւաց, որ արտականների գլխաւոր ուղիւ է եղել Պետերբուրգ-Իրկուտսկ-Ձիտա-Խարաբովսկ-Նիկոլաեւսկ-Սախալին-Օխոտսկ. ահա այս փառքի արխիւներից էլ պիտի ստուգել Խաչատուր Արովյանի արտոնութիւնը:

Ընդունել իմ յարգանքներիս հաւաստիքը՝

Ռուբէն Ծ. Վարդապետ Մանասեան

Թիւ 17

15 Մարտի 1926 թ. էջմիածին»:

Ռուբէն Վարդապետի այս գրությունից բացի կան այլ վկայություններ եւս, որոնք գալիս են ամրապնդելու Աբովյանի սիրբերեան կեանքի վարկածը: Այսպէս, օրինակ, 19րդ դարի վերջին Հեռուոր Արեւելքում ճանապարհորդ

դող գիտնականները աշխարհից կտրուած, մոռացուած մի գիւղականում հանդիպում են երեխաների, որոնք ազատ խօսում էին գերմաներէն: Երբ գիտնականները գարմանքով հարցնում են, թէ ո՞վ է նրանց սովորեցել այդ լեզուն, տեղացիները պատասխանում են, որ իրենց ուսուցիչն է եղել ազգութեամբ հայ Խաչատուր Աբովյանը:

Ռուս յայտնի գրող եւ հրապարակախօս Ն. Չեռնիշեւսկին Աստրախանում եղած ժամանակ տեղաբնակ հայերին պատմել է, որ իր Աքսորի տարիներին Սիբիրում հանդիպել է խ. Աբովյանին: «Ես Աբովյանի հետ էի», այսինքն է նա: Ժամանակին այս փաստը հաստատել է նաեւ էջմիածնի ճեմարանի ուսուցիչ Ստեփան Կանայանցը, ով Գերմանիայում իր ուսումնառությունից հետո Խաչատուրի հայերից ստացել է դէպքը հաստատող նամակ:

Գալով վերը ներկայացուած փաստաթղթի յետագայ ճակատագրին՝ կարող ենք ընդամենը յաւելել, որ արխիւային մատենաներում մեզ յաջողուեց գտնել եւս մի կարծրութիւն, որտեղ ասուած էր.

«Գիտութեան եւ արուեստի ինստիտուտին, կից ուղարկուած է Ռուբէն Ծ. Վարդապետ Մանասեանի նամակի պատճէնը, Լ. ժողովում Ա. Մուսեանի մակագրութեամբ:

Աւագ գործաւար՝ Մ. Յակոբջանեան

2984 27.03.26թ.»

Յայտնի է, որ աւելի ուշ Ռուբէն Վարդապետը նոյն խնդրանքով դիմել է նաեւ Վենետիկի Միսիթարեան միաբանությունից հայերին: Այլ տեղեկութիւններ դրանց ընթացքի մասին չկան: Պէտք է կարծել, որ այն օրերին այնքան էլ հետը չէր կազմակերպել որոնումներ Հեռուոր Արեւելքում, մի բան, ինչն այսօր, կարծում ենք անհամեմատ աւելի հեշտ իրագործելի է:

ԱԳՐԵՍՈՐՆ ԱԴՐԲԵՉԱՆՆ Ե

Շարունակուած էջ 5-էն

ինչը նոյնպէս հետաքրքիր է տարածաշրջանային զարգացումների տեսանկիւնից:

-Դառնանք կրկին մեր »դարդին«: Քիչ առաջ Դուք ասացիք, որ Հայաստանը պէտք է պայմաններ դնէր Ռուսաստանի առջեւ: Ի՞նչ էք կարծում, եթէ դներ, Ռուսաստանը կըր համաձայնէ՞ր:

-Այո, կը համաձայնէր: Երկու պատճառով. նախ որ Հայաստանը, որպէս տարածաշրջանում Ռուսաստանի միակ դաշնակից, եւ Գիւմրին, որպէս տարածաշրջանում միակ Ռուսական ռազմաբազա (չիշենք, որ Ռուսաստանը վճարում է Գաբալայի ռազմիկացիներին կաշառք, Սեւաստոպոլի ֆլոտի համար նոյնպէս), այստեղ եւս Ռուսաստանը պէտք է պատրաստ լինէր վճարելու իր ռազմակայանի ծախսերի դիմաց, եթէ, իհարկէ, Հայաստանը պահանջէր:

Երկրորդ պատճառն էլ այն է, որ եթէ Հայաստանը չի պահանջում հաւասար պայմաններ, Ռուսաստանը, հաստատապէս, երբեք

չի յարգի Հայաստանին: Ռուսաստանը, ինչպէս բոլոր միւս երկրները, յարգում է ուժը, եթէ ոչ աւելին:

-Գիտե՞ք, պարոն Կիրակոսեան, ինչն է հետաքրքիր. Հայաստանը 49 տարով նախընտրել է Ռուսական վեկտորը, Դուք դրա դէմ չէք բողոքում, բայց ռազմաբազաների գնի դէմ »բողոքում« էք:

-Թող տուէք բացատրեմ՝ ինչու. ինքնին հասկանալի է, որ Հայաստանը պէտք է ունենայ համագործակցութիւն Ռուսաստանի հետ: Բայց Հայաստանը նաեւ բաւանսի կարիք ունի եւ պէտք է համագործակցութեան կապեր ունենայ նաեւ Արեւմուտքի հետ: Ասածս չի նշանակում, թէ «հանենք» այստեղից Ռուսաստանն ու իր ռազմաբազաները, եւ այստեղ բերենք Արեւմուտքը, ՆԱՏՕ-ն կամ ամերիկացիներին: Ողջ խնդիրն այն է, որ Հայաստանը պէտք է լինի ինքնաբաւ եւ չպէտք է լինի որեւէ երկրից կախուածութեան մէջ: Սա է իմ մտահոգութիւնը:

Ջրոյցը՝ ԿԱՐՄԷՆ ԴԱԻԹԵԱՆԻ



ՕԾՈՒՄԸ ՍՐԲՈՑ ԴԵՒՈՆԴԵԱՆՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՏԱՃԱՐԻ

Շաբաթ և կուած էջ 1-էն

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՍՏ Ս. ՂԵՒՈՆԴ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Կիրակի, Սեպտեմբեր 12ին, կէսօրէ առաջ ժամը 10:30ին, Պըրպէնքի նորած Սրբոց Ղեւոնդեանց առաջնորդանիստ Մայր եկեղեցիին մէջ իր անդրանիկ պատարագը մատոյ Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսը, աւընթերակալութեամբ Հայաստանի Գեղարքունիքի շրջանի առաջնորդ Գերշ. Մարկոս Եպս. Յովհաննիսեանի եւ Եփրատի Հայոց առաջնորդ Գերշ. Աշոտ Եպս. Մնա-

Տէրտէրեան, իօսք առնելով ողջունեց Գարեգին Բ. Կաթողիկոսի օրհնաբեր այցելութիւնը եւ մէկ առ մէկ ներկայացուց հիւր հոգեւորականները ու ներկայ անձնաւորութիւնները: Այնուհետեւ շնորհակալութիւն յայտնեց Գերշ. Վաչէ Արք.ին որ տեսիլքն ու նախաձեռնութիւնը ունեցած էր այս եկեղեցիի շինութեան գործին: Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. իր քարոզին մէջ առանձնապէս անդրադարձաւ իրաչփերացի տօնին հետ առնչուող Ս. Խաչի փրկարար զօրութեան, բոլոր ժողովուրդներու յատկապէս հայ ազգի համար եղած է յոյսի ապաւէն: Կոչ ուղղեց հա-



ցականեանի: Հոգեպարար երգեցողութիւնը կատարեց առաջնորդարանի Խաչատուրեան երգչախումբը, ղեկավարութեամբ Բարշ. Ստեփան Սրկ. Կէօզըմեանի, Կոմիտաս քառաձայն երգեցողութեամբ:

Ս. Պատարագին հիւրերու շարքին էին Ուաշինկթընի Հայաստանի դեսպան Թաթուլ Մարգարեան, Լոս Անճելըս Հայաստանի Հանրապետութեան աւագ հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեան, Հ.Բ.Լ.Մ.ի Կեդր. Վարչութեան նախագահ Պերճ Սեդրակեան, հայկական աւանդական երեք կուսակցութեանց՝ Ս.Դ.Հ.Կ.ի, Ռ.Ա.Կ.ի եւ Հ.Յ.Բ.ի ներկայացուցիչները, նախկին առաջնորդ Գերշ. Վաչէ Արք. Յովսէփեանը, ինչպէս նաեւ իրաքի, Գանատայի, Դամասկոսի, ԱՄՆ-ի Արեւելեան թեմի, Հայաստանի Կոտայքի թեմի առաջնորդ սրբազաններն ու Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան ներկայացուցիչ գոյգ արքեպիսկոպոսներ, նմանապէս եպիսկոպոսական եկեղեցւոյ ներկայացուցիչ Ուիլիամ Եպս. Ուիլյամ: Վեհափառ Հայրապետի շքախումբի այլ անդամներ, տարբեր քաղաքներու թեմական ներկայացուցիչներ, աւելի քան երկու տասնեակ քահանայ հայրեր, բարերարներ, մամուլի եւ կազմակերպութեան ներկայացուցիչներ:

Շովածաւալ բազմութիւն մը հաւաքուած էր թէ եկեղեցիէն ներս, թէ դուրսը՝ Թրբանճեան բլրան եւ թէ յարակից Գալաճեան սրահ, որոնք լայնածաւալ հեռուստապատուներով, կը հետեւէին արարողութեան:

Պատարագը պահ մը ընդմիջուեցաւ եւ վեհափառ խորանէն դաս իջնելով օրհնեց շարք մը մանուկներ՝ որոնք որպէս կրտսեր կնքահայրեր, օժանդակած էին այս եկեղեցւոյ շինութեան եւ ստացան փոքր լանջախաչեր իբրեւ նուէր: Այնուհետեւ Արեւմտեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք.

ւատքով ամուր մնայ եւ շարունակել ձեր նուիրաբերումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ Հայաստանին, նաեւ շնորհակալութիւն յայտնեց եկեղեցին կառուցողներու եւ բարերարներուն, որոնց շարունակական ճիգերուն շնորհիւ իրականութիւն դարձաւ առաջնորդարանից մայր եկեղեցւոյ ներկայ կառուցը:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱԼԱ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Ողջունելու համար Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի հայրապետական չորրորդ այցելութիւնը եւ տօնախմբելու համար Արեւմտեան թեմի նորակառուց Սրբոց Ղեւոնդեանց Տաճարի Օծման Արարողութիւնը, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի եւ համանուն թեմի թեմական Խորհուրդի նախաձեռնութեամբ՝ «միաձայնաբար կ'առուցեցինք միասնաբար պիտի տօնախմբենք» ընդհանուր լօզունգի ներքեւ կազմակերպած էին պաշտօնական կալա-ճաշկերոյթ մը, որ տեղի ունեցաւ Կիրակի, Սեպտեմբեր 12, 2010, կ.վ. ժամը 5:00-ին, Universal Hilton Պանդոկին մէջ, Studio City:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը շրջապատող՝ Կալային իրենց մասնակցութիւնը բերող աւելի քան ինը հարիւր հոգի հաշուող հայորդիներու՝ բարերար, նուիրատու, բարեսիրական կազմակերպութիւններ, ազգային կառույցներու եւ մամուլի ներկայացուցիչներու շարքին իրենց պաշտօնական ներկայութեամբ ու շարքութիւն կը գրաւէին Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Եպիսկոպոս եւ հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ Սրբազան Հայրերը, Հայր Առաջնորդ սրբազան հայրերը, նաեւ, Միացեալ Նահանգներու Հայաստանի Դեսպան Վսեմաշուք Թաթուլ

Աթոռեանը, Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան Նախագահ Պերճ Սեդրակեանը, Լոս Անճելըսի Քաղաքապետ, Վսեմաշուք՝ Անթոնիօ Վիյարէկոսա եւ ուրիշներ:

Տեղի ունեցող ներկայ տօնական հանդիսաւոր Կալա-ճաշկերոյթին, ԱՄՆ-ի եւ Հայաստանի Հան-

Կատարուեցան նուէրներու տուչութիւն, գնահատագիրներու փոխանակում, Հայրապետական շքանշաններու զետեղում լամբակներուն վրայ այն ազգայիններուն, որոնք բարոյապէս եւ նիւթապէս գորավիզ կանգնեցան Արեւմտեան թեմի նորակառուց Սրբոց Ղեւոնդեանց Տա-



րապետութեան Քայլերգներու՝ Ալեւուշ Եղիազարի - ընկերակցութեամբ Գեղամ Աշճեանի- կատարողութենէն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի կողմէ սեղաններու օրհնութենէն, ճաշկերոյթի Յանձնախումբի Ատենապետուհի Սիւթիա Տիգրանեան-Նուրեանի Բարի Գալուստի խօսքն եւ Վեհափառ Հայրապետի Այցելութեան Յանձնախումբի Ատենապետ եւ հանդիսավար Յովսէփ Կանիմեանի բացման խօսքն ետք, ողջոյնի Խօսքով հանդէս եկան Քաղաքապետ Անթոնիօ Վիյարէկոսա, Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Եպիսկոպոս Գերշ. Սրապիոն Թաթուլ Աթոռեան, Ա.Մ.Ն.-ի Արեւելեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան, Հ.Բ.Լ.Մ.-ի նախագահ Պրն. Պերճ Սեդրակեան եւ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան:

Ողջոյնի Խօսքով ելոյթ ունեցողները, բոլորն ալ, գնահատեցին եւ շնորհաւորեցին նորակառուց Տաճարի յաղթական աւարտը: Մեծապէս դրուատեցին անոր կառուցման մէջ իրենց բարոյական, գործնական, աշխատանքային եւ մեծ կամ փոքր նիւթական ներդրում կատարողները:

ճարի կառուցման հսկայական աշխատանքին մէջ:

Հայրապետական Պատգամով եւ Օրհնութեամբ հանդէս եկաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետը, որ Չերմօրէն շնորհաւորեց Արեւմտեան թեմի նորակառուց Սրբոց Ղեւոնդեանց Տաճարը, իր օրհնութիւնը տուաւ բոլոր անոնց, շինարար, երկրաչափ, յանձնախումբերու անդամներ, ծրագրողներ, բարերարներ, մէկ խօսքով բոլոր անոնց, որոնք իրականութիւն դարձուցին նորակառուց տաճարը: Վեհափառ Հայրապետը կարգ մը շահեկան մանրամասնութիւններ տուաւ էջմիածնէն ներս տարուած կառուցողական, բարեսիրական եւ հոգեւոր սերունդներու պատրաստութեան աւընթեր կատարուած եւ դեռեւս շարունակուող աշխատանքներու մասին: Վեհափառ Հայրը ի միջ այլոց անդրադարձաւ Սրբ. Էջմիածնի եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջեւ խմորուող հաշտարար նախաձեռնութիւններու ընձեռման մասին:

Բացառիկ յաջողութիւն արձանագրած մեծապէս գնահատելի ճաշկերոյթ-Կալան Հայրապետական օրհնութեամբ հասաւ իր աւարտին:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱԿ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ԸՆՈՒՉԱՅՆԵԼ (626) 797-7680

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

Dr. Missak Ekmekdjian
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծախառնակներու եւ մանուկներու Քայլափոխարկի բուժում:
Գլխացու, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ջատեր:
Ինքնաշարժի վթարի հետեւեղծով պատուհած վնասուածքներու բուժում:
Չեր առողջօրիւնը մեր մտահոգօրիւնն է

ՍԽՏՈՐ

Դեղատոմսեր յօդերի հիւանդու թեան դէպքում

- Վերցնել սխտորի 3-5 խոշոր պճեղ, կէս գլուխ սոխ, լաւ մանրացնել եւ խառնել: Զանգուածը լցնել էմալպատ տարայի մէջ, աւելացնել ալոէի մէկ տերեւ (ալոէն պէտք է լինի երեք տարեկանից ոչ պակաս), մի կտոր մեղրամոմ (լուցկու տուփի մեծութեան) եւ մի ճաշի գդալ հալած իւղ (հալած կարագ): Խառնուրդը մարմանը կրակի վրայ եռացնել, ապա լաւ խառնել (եթէ գնդիկներ լինեն, դրանք լաւ տրորել): Սառեցնել մինչեւ սենեակային ջերմաստիճան, ապա կոմպրեսի ձեւով դնել ցաւոյ մասին, տաք փաթաթել եւ թողնել ամբողջ գիշեր:

- 3 գլուխ սխտորը մաքրել, դարձնել շիլայանման գանգուած, քամել վեց կիտրոնի հիւթը, աւելացնել մի թէյի գդալ թարմ ծովաբողկին եւ այս ամէնը լաւ խառնել իրար: Ստացուած

գանգուածը երեք շաբաթ պահել մութ տեղում՝ ամէն օր խառնելով: Երեք շաբաթ յետոյ թանգիֆով քամել, ընդունել օրը երկու անգամ (առաւօտեան եւ երեկոյեան)՝ մէկ թէյի գդալ գանգուածը լուծելով կէս թէյի բաժակ ջրում: Բուժման կուրսը՝ մինչեւ դեղամիջոցը վերջանայ:

- Թարմ սերուցքային կարագը հալեցնել առանց աղի, աւելացնել 2 պճեղ սխտորի թարմ քամած հիւթ, լաւ խառնել: Դնել կրակին եւ եռացնել, ապա նորից լաւ խառնել եւ քամել: Զանգուածը մերսել ցաւոյ մասերի վրայ՝ մինչեւ լրիւ ներծծուի:

- 5 խոշոր գլուխ սխտորը մանրացնել, աւելացնել կէս լիտր օդի: Թողնել մութ, տաք տեղում երկու շաբաթ: Միջոցն ընդունել օրը երեք անգամ, ուտելուց առաջ, մէկ թէյի գդալի չափով: Խորհուրդ է տրուում խմելուց առաջ դեղամիջոցը լուծել 1/4 բաժակ եռացրած սառեցրած ջրում: Բուժման կուր-

սը՝ մինչեւ պատրաստած դեղամիջոցը վերջանայ:

Շաքարախտի դէմ:

Սխտորն, առհասարակ, յաճախ է օգտագործուում դեղագործութեան մէջ: Առաջին եւ երկրորդ կարգի շաքարախտի դէպքում շատ օգտակար են սխտորի հիմքով պատրաստուած դեղերը եւ միջոցները: Ճապոնիայի՝ Սուգուկիի բժշկական համալսարանի գիտնականները լաբորատոր փորձաքննութիւններ են կատարել մկների արեան օգնութեամբ՝ նրանց տալով հաբերի տեսքով յայտնագործած սխտորի հիմքով պրեպարատը: Բժիշկների համոզմամբ՝ սխտորի հակաբորբոքային յատկութիւնների շնորհիւ հնարաւոր է դարձել էնդոկրին համակարգի կայունացումը եւ ինսուլինի հորմոնալ մակարդակի վերահսկողութիւնը:

Սխտորի մէջ առկայ վանդիոմի եւ ալլաքսինի քիմիական միացութիւնն, ըստ գիտնականների, շաքարախտի դէմ շատ ուժեղ միջոց են, որոնք նաեւ կանխարգելում են այդ հիւանդութեան ի յայտ գալը: Յետազոյում գիտնականները սխտորի միջի այդ միացութիւնը ներարկել են կրծող կենդանիներին: Այդ միացութեամբ պատրաստուած պրեպարատը՝ հաբերի տեսքով լաւագոյն արդիւնքներն է արձանագրել: Դեղագործները պատրաստուում են այդ դեղամիջոցը փորձարկել նաեւ մարդկանց շրջանում: Թերապեւտների խօսքով՝ ի տարբերութիւն շաքարախտի ընդունուած բուժմանը՝ ինսուլինի ամէնօրեայ ներարկումների միջոցով, բազմաթիւ վնասներ են հասցնում օրգանիզմին, իսկ սխտորով այս նոր դեղամիջոցն անվնաս է եւ նպաստում է իմունային համակարգի, դիմ ադրոդակնութեան ամրապնդմանը եւ շաքարախտով հիւանդների մօտ՝ ինսուլինի վերարտադրման կարգաւորմանը:

«ՄԻԻԹԱՐԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԵՐԱՍՈՒՏԸ

Շարունակուած էջ 8-էն
հերկենք մեր մատղաշ սերունդին միտքն ու հոգին: Յանենք այդտեղ առատ բուռով հայոց լեզուն եւ հանճարը: Երկնքնք՝ մինչեւ նկարենք իւրաքանչիւրին մէջ նոր Մեքսիկոյի, որ պատրաստ ըլլան դիմագրաւելու կեանքի բերած դժուարութիւնները եւ գտնեն անոնց

լուծումը մեծ Հացեկացիին կորովի հոգիին օրինակով»: Տնօրէնին սրտառու է խօսքերով լիցքաւորուած եւ ոգեւորուած՝ աշակերտները եւ ուսուցչական կազմը ուղղուեցան իրենց դասարանները «Հերկելու իրենց միտքն ու հոգին եւ ցանկելու առատ բուռով Հայոց լեզուն»: Թղթակցութիւնը վարժարանէն

ՏՈՒՆԴԱՐՁ

Շարունակուած էջ 6-էն

- Իսկ հիմա ո՞ւր է այդ կինը, բանտում... հարցնում եմ ես:

- Ոչ, ի՞նչ էք ասում, նա արտասահման է փախել եւ ոչ ոք չգիտի թէ ուր: Նա տարիներ շարունակ դրամ է կուտակել արտասահման տեղափոխուելու համար:

- Է, ինչո՞ւ պատկան մարմինները իւրաքանչիւր տարեվերջ չեն ստուգում նրա վճարումների հաստիքութիւնը:

- Գիտէք ինչ, պարոն Անասեան: Մենք մտնում ենք մարդկանց իրավիճակի մէջ: Շատ-շատեր դժուարանում ենք վճարումները ժամանակին կատարել, դէ մենք էլ մարդ ենք, հասկանում ենք այդ ամէնը եւ թոյլ են տալիս նման կարգի խախտումներ: Շատ ընտանիքներ են անվճարունակ եւ տարիներ շարունակ աւելանում է նրանց՝ պետութեանը տալիք պարտքի գումարը:

- Էլ ի՞նչ յիշեցնեմ քեզ, - փոքր ինչ յուսահատ ասում է ուղեղս, - էնքան փորձութիւններ ձեռնով անցար երեւանում, որ հիմա էլ յիշելիս՝ ծալքերիս գործունէութիւնն արագանում է: Գրեթէ մէկ ամիս օգտուեցի երեւանեան թաքսիներին, ի՞նչ է տպաւորութիւնը:

- Ասեմ: Նախ, ինչպէս ասում են՝ այսօր Երեւանում աւելի թաքսի կայ, քան մարդ: Ամէն քայլափոխի կարելի է տեսնել ժամեր շարունակ յաճախորդի սպասող մի քանի տասնեակ մարդկանց կամ ընկերութիւնների պատկանող գունաւոր, տարբեր ազգագրերով առլի մեծ ու փոքր թաքսի մեքենաներ: Եւ, հետաքրքիրն այն է, որ վարորդների մէջ մեծ թիւ են կազմում խորհրդային օրերին տարբեր պաշտօններ վարած, որոշակի գիտելիքներով գիտուած մարդիկ: Եւ չեղաւ մէկ վարորդ, որ գոհ լինէր իր աշխատանքից. «Օրը 15-20 ժամ եմ աշխատում, - ասում էր մէկը, «չորս երեխայ ունեմ, մէկն էլ ուսանող է, կինս չի աշխատում, հազուադէպ է պատահում, որ օրը դուրս աշխատեմ լաւ է, ասում էր միւսը: Մէկ ուրիշն էլ ասում է. «մինչեւ կէսօր եթէ հինգ դուրս

աշխատեմ լաւ է, պերերիվիս (ընդ-միջմանը) քեաբաբի եւ մի պաչկա սիգարետի փողը դուրս ա գալի: Թէ դրանից յետոյ մի հինգ դուրս աշխատեմ, եայ չաշխատեմ»:

- Չէ, չէ, անգին իմ ուղեղ, կանգնիր, կանգնիր, հերիք է ինձ տանջես երեւանեան տխուր յիշողութիւններով, ինչ է, ուրիշ բան չկա՞յ յիշելու: Ասենք օրինակ, երեւանի գեղադէմ օրիորդները, մէկը միւսից շքեղ, փառահեղ արտաքին տեսքով, շլացուցիչ լուսաւորումով աչք շոյող ռեստորաններն ու սրճարանները: Բա մէկը՝ միւսից նոր ու փայլուն Ջիպերն ու Մերսեդէսները, ինֆինիտիներն ու Համլընները:

- Այ, մի բան յիշեցի ուղեղ իմ հարագատ: Այնտեղ՝ Լոս Անճելոսում մի երիտասարդ, որ նոր էր հաստատուել Ամերիկայում, հարցրեց թէ ես ի՞նչ մեքենայ եմ վարում:

- Հասարակ մեքենայ է, ընտանեկան, եօթ նստատեղով, ութ տարուայ է, - ասացի նրան:

- Էդ ո՞նց, զարմացաւ երիտասարդը, - բա ձեզ նման մարդուն ՊԱՆՏԻ է՞ (վայել, սագել) ըստեց ավտօ քէլը...

- Պալոս է, պալոս, - պատասխանեցի երիտասարդին, որ Մերսեդէս էր վարում, բայց ծնողների հետ մէկտեղ ապրում էր մէկ սենեականոց բնակարանում:

- Հերիք է, բա է բարեկամս, ուղեղ իմ շարժուն, քիչ յետոյ վայրէջք ենք կատարում: Մէկերկու ժամից էլ տուն կը հասնենք: - Ի՞նչ, տո՞ւն: Դա տուն չէ, բնակարան է, բնակուելու տեղ: Հայաստանից դուրս ուր էլ որ ապրելու լինես՝ դա բնակատեղի է:

Տունն այնտեղ է՝ Հայաստանում եւ բոլոր սփիւռքահայերի տունն է այնտեղ՝ Արարատի փէշերին եւ ինչպէս Պարոյր Սեւակն է ասում՝

- Դա տուն չէ, Հայրենիք է, էն էլ ի՞նչ Հայրենիք:

Մեր... հայրենիքը մեզնից դատարկուեց:

Բայց... ո՛չ մի վայրկեան, ո՛չ մի ակնթարթ

Մենք չենք դատարկուել մեր հայրենիքից:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Մի ոմն գնահատելով մեր թերթի բովանդակութիւնն ու որդեգրած հետեւողական առողջ ուղղութիւնը \$50 տուար կը նուիրէ «Մասիս»ի ֆոնտին:

BURBANK AIRPORT BID REQUEST

Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E10-24, Module 12.4 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, September 29, 2010.

The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for 40 Single Family Condominium units.

Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for September 15, 2010, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California.

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ՀՌԻՓՄԻՄԷ ԳԱԼԷՆՏԷՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսինին Արշակ Գալէնտէրեանին եւ համայն ընտանեկան պարագաներուն:
Առ այդ փոխան ծաղկեպսակի \$50 տուար կը նուիրեն «Մասիս»ին:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով Զետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

ՍՓԻՌՔԻ ԿԱԶՄԱԻՈՐՈՒՄԸ, ՍՓԻՌՔԸ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՅԱՅՐԵՆԻՔԸ

Շարունակում էք 13-էն

կոչին 1941-1942 թուականներին ամենախոշոր, ամենափոքր գաղթածահաններում կազմակերպեցին կարմիր բանակի եւ սուժած շրջաններին օգնող կոմիտեաներ:

Առաջին իսկ առիթով Հայկ-պում հանգանակուել է 4400 ոսկի, իսկ Պէյրուսում մօտ 8000: Այս գումարները ժամանակին ուղարկուած էին Թեհրանի Սովետական դեսպան պարոն Սմիլնովին:

Եթովպիայի փոքրիկ Գադու-թը, օգնութեան մասին հետեւեալ պերճախօս վկայութիւնը: 1945-ի Յունուարի 12-ին Եթովպիայի ՍՍՌՄ ներկայացուցչական առաջին քարտուղար Գ. Շուշումեանի արտասահմանեան երկրների հետ մշակութային միութեան կապի ընկերակցութեանն ուղղուած նամակում կարդում ենք.

«Երբ Ֆաշիստական Գերմանիան չարձակուեց ՍՍՌՄ-ի վրայ յատուկ հայերի ճնշող մեծամասնութիւնը անցաւ մեր երկրի յաղթանակի կողմը եւ սկսեց նրանց ցոյց տալ նիւթակաւն օգնութիւն»: Այնուհետեւ բերում է հետեւեալները: 1942-ի Մայիսի 18-ին Հայաստանի կառավարութեան հասցէով Լոնտոնի դեսպանութեան միջոցով փոխադրել է 17-920 շիլինկ, որ հաւաքուել է Եթովպիայի հայերից:

Իրանում, Լիբանանում, Սիրիայում, Կիպրոսում եւ այլուր եղել են բազմաթիւ դէպքեր, երբ հայ ընտանիքը, ինքը ծայրահեղ կարիքի մէջ, ամսուայ վաստակը նուիրաբերել է կարմիր բանակի օգնութեան ֆոնդին:

Սփիւռքահայ առաջադիմական թերթերը լուսաբանում էին նուիրատուութիւնների ընթացքը, սպազորում էին նուիրատուների անունները եւ յատկացուած գումարը:

Նորագոյն հայոց սփիւռքի ցուցաբերած օգնութիւնը Սովետական Միութեան օգնութիւնն էր նաեւ Խորհրդային Հայաստանին:

Սա է նշանակում հայրենիք-սփիւռք գործնական եւ արդիւնաւէտ յարաբերութիւնների զարգացման ուղին եւ հայրենասիրական կողմնորոշումի առաջընթացը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ սոցիալիստական երկրների, Սովետական Միութեան ու այդ համակարգում Հայաստանի անախիւրճաց յաջողութիւնները, ամբողջ աշխարհում ուժերի շարաբերութեան փոփոխութիւնը հիմք հանդիսացան, որ հայրենիք-սփիւռք յարաբերութիւնները թեւակոխեն իրենց պատմութեան նոր փուլը, որն սկսում է 1946-1947 թուականներին կազմակերպուած հարիւր հազարաւոր սփիւռքահայերի հայրենադարձութեամբ ու դրա համար տարուած նախապատրաստական աշխատանքով:

1946-1947 թուականների գանգուածային հայրենադարձութիւնը, իրօք, տարբերում էր իր պատմական ժամանակաշրջանով, բնոյթով, տարողութեամբ ու սփիւռքահայութեան մօտ ստեղծուող հայրենասիրական բարձր

ոգիւր եւ հայրենիք հասկացողութեան շուրջ դրական եղանակների փոփոխութեամբ:

Սփիւռքի առաջադիմական հայրենասիրական կեցուածքը նպաստեց նաեւ երկրորդ հայրենիքի ժողովուրդների հետ ունեցած բարեկամական կապերի սերտացմանն ու աւելի ուժեղացմանը:

Սփիւռքը իր լուծման էր ներդրում աշխարհի այլ ժողովուրդների ազատագրական պայքարի, ազգային զարթօնքի, տնտեսական ու մշակութային զարգացման գործում, բազմաթիւ հայ որդիներ՝ Մանուշեաններ ու Լասեր, պայքարել են յանուն ազատ դեմոկրատական Ֆրանսայի: Պուլկար ժողովուրդը մեծ երախտագիտութեամբ է յիշում Հերմինէ Ռազգրատեանի ու Յարութիւն Պողոսեանի անունները: Լիբանանի նախկին վարչապետ Ռիատ Սոլհը ասել է. «Ես հայերի ներկայութիւնը այս երկրում ընդունում եմ գրկաբաց առանձին հաճոյքով, նրանք այս երկրի անկախութիւնը գոցէ մեզանից աւելի լաւ պաշտպանեն» (տես՝ Պողոս Թիւթիւնջեան, Լիբանանի ժողովրդի ազատագրական պայքարը եւ հայ համայնքը 1920-1990թթ. էջ. 67):

Ռիատ Սոլհի լիբանանահայերին ուղղած սրտազին խօսքի էութիւնը արտայայտուած է Լիբանանի Կոմկուսի 1982թ. Ապրիլի յայտարարութիւնում:

Լիբանանի կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի յայտարարութիւնը՝ 24 Ապրիլ 1982թ.-ին հայերին հայկական դատին եւ լիբանանահայոց պայքարի շուրջ ասում է «...Լիբանանում եւս Հայ գանգուածները զարգացան եւ դիրքորոշուեցան քաղաքականօրէն եւ իրենց դերը խաղացին ընկերութեան մէջ, այն նոյն շրջագիծէն ներս, ուր զարգացան լիբանանեան գանգուածները ընդհանրապէս, տնտեսական, ընկերային ու մտաւոր նոյն ազդակների ազդեցութեան ներքոյ ընդհանուր առմամբ: Սակայն անոնք մնացին հաւատարիմ՝ իրենց ազգային դատին, ժառանգին ու աւանդոյթներին: Մեր կուսակցութեան հիմնադրումից ի վեր, հայ կոմունիստները, իրենց Լիբանանցի Արաբ ընկերների կողքին նպաստեցին մեր կուսակցութեան փառապանծ պատմութեան կերտումին՝ իմպերիալիզմի ու յետադիմութեան դէմ եւ ազգային անկախութեան, դեմոկրատիայի ընկերային առաջադիմութեան ու սոցիալիզմի ի խնդիր մղուած պայքարում, իրենց ժողովրդի ազգային դատի պաշտպանութեան գործում:

Նոյնպէս հայ կոմունիստները, այլ հայ առաջադիմական ուժերի (Հնչակեան եւ ռամկավար կուսակցութիւնների եւ անկուսակցականների եւ հայրենասէր անձնաւորութիւններն ու գանգուածը) հետ միասին, հիմնական դեր խաղացին, հայ եւ Արաբ եղբայրական յարաբերութիւնների սերտացման մէջ»:

1924 թուականի Հոկտեմբերի 24-ին ստեղծուեց Լիբանանի կոմունիստական կուսակցութիւնը՝ «Լիբանանի ժողովրդի կուսակ-

ցութիւն» անուանումով:

Կոմունիստական «Սպարտակ» երիտասարդական կազմակերպութիւնը հիմնուել է 1923-ի վերջին, նախապէս այս խմբակը հարում է Հնչակեան Ուսանողական Միութեանը: 1924թ. սկիզբները լիբանանահայ իրականութիւնէն ներս, Սպարտակով սկսուող կոմունիստական շարժումը ընթացաւ յամառ, բարդ ու դժուարին յարատեւ պայքարների, նրա դէմ շղթայագերծուած դաժան հալածանքների դիմադրութեան ուղիով: «Սպարտակի» հիմնադիրներն են՝ Յարութիւն Մատէյեանը, Պետրոս Պարտիզպանեանը, Ոսկան Յովհաննիսեանը, Խաչիկ Փափագեանը, Արամ Երէցեանը, Հայկազուն Պոյաճեանը, Արամայիս Փանոսեանը, Սեդրակ Հայկազեանը, Ստեֆան Գաֆաֆեանը, Փանոս Արամայիսեանը, Յակոբ Տէր-Պետրոսեանը՝ (Հայաստանի 3-րդ հանրապետութեան առաջին Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի հայրը):

Այս մասին տես՝ Հ. Խ. Թոփուզեան, հայերի մասնակցութիւնը Սիրիայի եւ Լիբանանի ազգային ազատագրական շարժումներին, Երեւան, 1968թ., էջ 29: «Յ. Մատէյեանն իր հերթին հաստատել է վերը նշեալ անունների ճշգրտութիւնը, երբ այդ հարցումով դիմել ենք իրեն»:

Լիբանանի եւ Սիրիայի հայ կոմունիստները 1925 թուականից, գանազան ընդյատակեալ զաղտնի թերթեր լոյս տեսել են, դրանք ընդհանրապէս խմորատիպ կամ մեքենագիր բազմագրուած:

Նոր Փարոս: Խմորատիպ, Պէյրուս, 1925թ.: 24 էջ, Ա. Թիւր լոյս է տեսել 1925թ. Յունիսին, իսկ Բ. Թիւր՝ Օգոստոսին: Խմբագիր՝ Յարութիւն Մատէյեան եւ ուրիշներ, աքսորուած են դէպի Տէր-Ջօրի կողմերը: Ֆրանսական իշխանութիւնների կողմից, եւ հոն լոյս ընծայել են:

Սպարտակ: Խմորատիպ, Ռաքքա (Սիրիա) 1927թ. Ա. Թիւր 1927 թուականի Յունուարի սկիզբ, Բ. Թիւր՝ Փետրուարին, իմբ. Յ. Մատէյեան:

Աքսորները փոխադրուել են Սիրիայի Գատմոս Բերդը (Սիրիա), եւ հոն պատրաստել են՝ «Նոր Բաստիլլ», ձեռագիր, Կատմոս Բերդ (Սիրիա), 1927 Օգոստոս, արաբերէն եւ հայերէն բովանդակութեամբ: Յօդուածները ստորագրուած են՝ Հնչակեան գործիչ Սարգիս Տիւրուհի, Յարութիւն Մատէյեան եւ Հայ-

կազուն Պոյաճեան: (տես՝ Ժիրայր Դանիէլեան, բանասիրական որոնումներ, Պէյրուս 1996, էջ՝ 85,93,94):

Այդ բարեկամութիւնը առաջին հերթին արտայայտուած էր սուրեալ ժողովրդի առաջ ծառայած խնդիրների լուծմանը ակտիւօրէն մասնակցելու մէջ: Այդ պատճառով էլ այն ունենում էր իր կոնկրետ դրսեւորումը իւրաքանչիւր սփիւռքահայի օջախում:

Սփիւռքահայը ազնուօրէն ծառայելով զինք հիւրընկալող երկրի ժողովրդին, երկրորդ հայրենիքին ազատութեան ու առաջընթացի գործին, մախթամանակ ծառայած լինում էր իր մայր Հայրենիքին: Հայ եւ Արաբ բարեկամութեան ոգին գնահատելով, Արաբ ժողովրդի հերոս գաւակը՝ Ֆարժուլլա Հլուն գրում էր. «Ամէն անգամ, որ յետադիմականները մեզ այպանում են հայերի հետ բարեկամ լինելու համար, մենք նրանց պատասխանել ենք, ամաչելու ոչինչ ունենք եղբայրակցելու աշխատաւոր ու պատուաւոր մի այնպիսի ժողովրդի հետ, որը մեզ հետ ձեռք-ձեռքի պայքարում է ազատութեան ու անկախութեան համար»: Սփիւռքի այդպիսի արժէքաւորումը կապուած էր նրա առաջադիմական կողմնորոշման հետ:

Այդ բարեկամութիւնը իր ցայտուն արտայայտութիւնն է գտնում նաեւ մշակութային ասպարէզում, հայ եւ արաբ առաջադէմ մտաւորականների կողմից արաբերէնի են թարգմանել բազմաթիւ հայերէն գրքեր:

Լիբանանի յայտնի լեզուաբան ու իսլամական դերագոյն խորհրդի անդամ Շէյխ Ապդալլա Ալէյլին գտնում էր, որ Մաշտոցն իր մեծութեամբ գաւակն է նաեւ Լիբանանին «Մեսրոպ Մաշտոցը ինչպէս մայր մը լիբանանեան, եկած դարերից ու պատկանում է դարերին»:

Այդ, պատմական վաւերական ճշմարտութիւն է, հայոց նոր սփիւռքը, յատկապէս Լիբանանի եւ Սիրիայի ազգային անկախութեան պաշտպանութեան հասարակական խնդիրների համար, արաբ ժողովրդի հետ պայքարի միասնութիւնը:

Արդէն այս գործընթացը դարձել էր սփիւռքահայութեան ազգային ընդհանուր քաղաքականութիւնը զինք հիւրընկալող երկրի ազատութեան եւ առաջընթացի գործին: (Շարունակելի)

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՀԵՌՈՒՍՏՍԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԷՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)
GLOBACAST SATELLITE
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթերփին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին հաճեցեք կապ պահել մեզի հետ:
G.Y.O.1060N.ALLEN.AVE.PASADENA,CA91104

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՈՒՍՅ

ARMENIAN INDEPENDENCE DAY

ՓԲՈՒՆՈՒՄԱՆ ՕՐՈՒՄՆԵՐԻ ՖԵՍՏԻՎԱԼ

SUNDAY SEPTEMBER 26, 2010
VERDUGO PARK, GLENDALE



ԵՐԳ ՈՒ ՉԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
ՓՈՐՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

Live Music
Dancing
Art Work Exhibition
Kids Games
Armenian Food



Cosponsored by the City of Glendale

To reserve your booth
please call Nor Serount Cultural Association
Չե՛ր կրպակնեղը ապահովելու համար
Հեռախոսնեղք նոյ Աերունդ Աջակցալիմն Ալիպետս
(818) 391-7938

Media Sponsors



Sponsors

